Հ. Կ. Կ. Կ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 4

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ԸՍՏ ՅՈՒՐՄԱԼԻԱՏԻ

# ԿԱԹՆԱՏՈՒ ԿՈՎԻ

## ԿԵՐԱԿՐԵԼՆ ՈՒ ԽՆԱՄՔԸ

Թարգմանեց Ն. ՍՈՂԱԹՅԱՆ

Կազմված է խմբագրությամբ
Խ. ՅԵՐԻՑՅԱՆԻ

ՅԵՐԵՎԱՆ
1924

## ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ Խ. ՅԵՐԻՑՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ Հ.Կ.Կ.Կ.Կ.-Ի ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՐԻԱՅԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔՈՒՅԿՆԵՐԸ

1. Ն. Պոպով — *Ոչխարի քյափանակ հիվանդությունը* Գինն է 10 կոպ.
2. Ն. Մելիք-Շահնազարյան — *Դաշտային մկները և նրանց դեմ կռվելու միջոցները* — Գինն է 15 կոպ.
3. Խ. Տեր-Ավագյան — *Մեղվի փտախտ հիվանդությունը և նրա դեմ կռվելու միջոցները* — Գինն է 20 կոպ.
4. Ս. Յուրմաղիաս — *Կաթնատու կովի կերակրելն ու խնամքը* Գինն է 30 կոպ.

---

**Տպագրվում են յեվ շուտով լույս կտեսնեն**

1. Մ. Թումանյան — *Բամբակի Մշակությունը*
2. Մ. Գլուխով — *Կանաչ պարարտացումը*
3. Ս. Յուրմալիաս — *Հորթերի խնամքն ու կերակրելը*
4. Ն. Ռիժով — *Արմատապտուղների մշակությունը*
5. Պրոֆ. Գուրին — *Հղի կովի խնամելը*
6. Սկոմորոխով — *Ընտանի կենդանիների հիվանդությունները*

**Դիմել Յերեվան. Հ. Կ. Կ. Կ. Կ.-ի հրատարակչության**
Эривань. издательство Ц. К. К. П. А.

№ 136

*Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք*

Հ. Կ. Կ. Կ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 4

ԸՍՏ ՅՈՒՐՄԱԼԻԱՏԻ

№ 163

# ԿԱԹՆԱՏՈՒ ԿՈՎԻ

## ԿԵՐԱԿՐԵԼՆ ՈՒ ԽՆԱՄՔԸ

Н 23868

Թարգմանեց Ն. ՄԱԼԱԹՅԱՆ

Կազմված է խմբագրությամբ
Խ. ՅԵՐԻՑՅԱՆԻ

ՅԵՐԵՎԱՆ
ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
1924

Պատվեր № 2099

# ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս գիրքը հրատարակելիս Կոմկուսի Կենտրոնական Կոմիտեյի Ագիտ-Բաժինը ցանկացել ե օգնության գալ մեր անասնապահ գյուղացուն և ցույց տալ, թե ինչպես պետք ե նոր ձևով կերակրել ու խնամել տավարը, վոր նա առողջ լինի, շատ կաթ տա և տիրոջը շատ օգուտ։

Այս գրքում գրած կերակրելու ձևը մենք մեր գլխից չենք հնարել։ Շատ վաղուց ե, վոր այս ձևով կերակրում են իրենց տավարը շատ առաջավոր ժողովուրդներ՝ դանիացիք, շվեդացիք, գերմանացիք, ամերիկացիք և այլն։ Այս ձևով կերակրում են նայև Ռուսաստանի շատ տեղերում։ Մեզանում ել են շատ փորձեր արել մեր գյուղացու հասարակ կովերի վրա և միշտ այդպիսի կերակրումից ստացել են 2-3 անգամ ավելի կաթ, քան գյուղացին ե ստանալիս յեղել իր կերակրած ձևով։ Նոր յեղանակով կերակրելն ե, վոր հարստացրել ե դանիական գյուղացուն ու նրա տավարը լավացրել։ 25-30 տարի սրանից առաջ դանիացոնց տավարն ել այնպես եր, ինչպես մեր տավարը։ Իսկ հիմա եդ յերկու տավարի մեջ սարեր կան։

Թե ինչումն ե կայանում կերակրելու նոր ձևը, այդ պարզ ու ամենքի համար հասկանալի լեզվով գրած ե այս գրքի մեջ։ Ուշադրությամբ կարդացողը հեշտությամբ կհասկանա և շատ ու շատ կշահի այս գրքի խորհուրդներից։ Այս գրքից կիմանա, թե ինչ տեսակ կերեր ե հարկավոր և վորքան ամեն մեկից, վորպեսզի տարվա պաշարը պատրաստ լինի և կանոնավոր կերակրումը գլուխ գա։

Ուրեմն տավարատերը պետք է իր տնտեսության մեջ ունենա այն բոլոր կերերը, վորոնք հարկավոր են նոր ձեվով և կանոնավոր կերակրելու համար։ Կերերի մի քանիսն ինքը կարող է պատրաստել իր տնտեսության մեջ (որինակ՝ խոտը, առվույտը (յոնջան) դարմանը, բազուկը, գազարը, կարտոֆիլը, վարսակի ալյուրը (овес) և այլն) մի քանիսն ել, յեթե ինքը չկարողացավ իր ձեռքով պատրաստել, պետք է գնի դրսից, յեթե ձեռնտու յե (որինակ՝ կտավատի, բամբակի քուսպերը, ալյուրի թեփը և այլն)։

Այնուհետեվ այս գրքից իմացվում է, վոր ամեն մի կով չի կարելի պահել ու կերակրել, յեթե նա կերակրելու ու խնայելու ծախսերը չի հանում։ Իսկ այդ իմանալու համար հարկավոր է կերը հաշվով տալ, կաթի և կովի քաշի համեմատ։ Ամեն բանում վարպետություն է հարկավոր։ Կաթնատու կովի կերակրելն ել մի մեծ վարպետություն է, վորը սակայն ամեն մի գյուղացի հեշտությամբ կսովորի, յեթե ցանկանա ու իր շահերը հասկանա։

Հենց դրա համար ել գրված է այս գիրքը, վոր գյուղացին իր շահերը հասկանա ու այնպես վարվի։

Թեպետ այս գիրքը ռուսերենից է թարգմանված, բայց սրա մեջ փոփոխություններ շատ են արված։ Շատ բան կրճատել ենք շատ բան ել ավելացրել ու աշխատել ենք մեր պայմաններին հարմարեցնել, իսկ վոր գլխավորն է, աշխատել ենք հասկանալի դարձնել մեր գյուղի միջակ ընթերցողի համար։

Խ. Յերիցյան

# ՄԱՍՆ I.

## Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՊԱՀԵԼ ԿԱԹՆԱՏՈՒ ՏԱՎԱՐԸ

### 1. ԿԱԹՆԱՏՈՒ ՏԱՎԱՐ ՊԱՀԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԸ

Կաթնատու տավարը կանոնավոր պահելու և կերակրելու նպատակն է՝ 1) նրան առողջ պահել, 2) քիչ ծախս անելով շատ քանակությամբ լավ որակի կաթ ստանալ և 3) առողջ սերունդ ստանալ։

Կաթնատու տավարը կանոնավոր կերակրելիս և պահելիս մենք չպետք է աշխատենք այնքան շատ կաթ ստանալ, որ ուրիշներին զարմացնենք, այլ այնքան, որ համապատասխանի տավարին տրված կերի արժեքին ու ցույց տված խնամքին։

Մեր նպատակին հասնելու համար մենք պետք է ունենանք ոչ միայն լավ կով, լավ կեր և լավ գոմ, այլ և պետք է ծանոթ լինենք կերակրելու և խնամելու կանոնների հետ։

Կաթնատու տավարին կերակրելու վերաբերյալ գոյություն ունեն շատ գիտական ու գործնական ուսումնասիրություններ, տվյալներ և կանոններ։ Սակայն դրանցից օգտվելու համար հարկավոր է նախապես գիտենալ և գործադրել խնամքի մի քանի ընդհանուր կանոններ։ Այս ընդհանուր կանոնները գործադրվում են կաթնատու տավարի կերակրման բոլոր ձևերի ժամանակ և համարվում են ամենակարևորներն ու ամենահիմնականները, ուստի և այդ պետք է կատարենք առաջին հերթին։ Հենց այդ կանոնների մասին է խոսվում այս գրքի առաջին մասում։

## 2. ԿԱԹՆԱՏՈՒ ՏԱՎԱՐԻ ՊԱՀԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

*Կաթնատու տավարը, մյուս բոլոր կենդանիներին նման, առողջ ապրելու համար կարիք ունի բավարար քանակությամբ մաքուր օդի, սնունդի, տաքության, լույսի և շարժումներ կատարելու։*

*Յեթե տավարի մաքուր օդը, տաքությունը և լույսը պակաս են և նա շարժումներ քիչ ե անում, այդ դեպքում կենդանին լավ կերակրելու ժամանակ ել շուտ-շուտ կհիվանդանա, կաթը կպակասեցնի, վորից և կտուժի տավարատերը։*

Միայն առողջ անասուններն են ամենալավ ձեվով օգտագործում իրանց տրված կերը յեվ տալիս են առողջ սերունդ։ *Հետեվաբար մենք վոչ մի միջոց չպիտի խնայենք, վորպեսզի մեր տավարն ապրի լավ պայմաններում և լինի առողջ։*

*Ամառը, տավարին հանդում արածացնելիս կարիք չի լինում մտածելու մաքուր օդի, լույսի, տաքության և շարժումների մասին։ Ձմրանն ընդհակառակը․ մենք ստիպված ենք նրան պահել գոմերում, իսկ մենք գիտենք, վոր մեր գոմերում ընդհանրապես օդը, լույսը, յերբեմն և տաքությունն անբավարար են. գոմը տաք յեղած դեպքում ել օդը շատ խեղդուկ ու կծու յե լինում։ Բացի դրանից մեր գոմերը մեծ մասամբ մութ, կեղտոտ և նեղ են լինում։*

*Մեզ մոտ լեռնային մասերում ցրտի պատճառով տարվա մեծ մասը տավարին պահում են գոմերում, ուստի և մենք առանձին լուրջ ուշադրություն պետք ե դարձնենք մեր գոմերի կառուցման վրա։*

*Գոմի շինության վերաբերյալ կատարված ամեն մի սխալը ապագայում տավարատիրոջ վրա կարող ե թանկ նստել, վորովհետեվ կաթնատու տավարին հնարավոր ե*

կանոնավոր պահել ու կերակրել միայն այն դեպքում, յերբ գոմը կարգին է շինված։

## Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԳՈՄԸ

1. Գոմը ձմրանը պետք է լինի տաք, այսինքն ջերմության աստիճանը չպետք է լինի Ցելս. 12°—15° ցածր։ Ով վոր կով կերակրել է, յերեվի կիմանա, վոր ցուրտ գոմում կովն ավելի շատ կեր է ուտում, քան տաք գոմում, բայց կաթ քիչ է տալիս. ուրեմն կերի մի մասն իզուր է կորչում։ Այդ ավելորդ կերը տավարը ծախսում է իր մարմինը տաքացնելու վրա, վորովհետեվ տավարի մարմինը ցուրտ գոմում ավելի շուտ է սառչում, քան տաք գոմում։ Կենդանու մարմնի տաքության աստիճանը պետք է լինի միշտ միենույն բարձրության վրա (խոշոր յեղջյուրավոր անասունները 37,5°—38° Ցելս.)։ Մարմնի տաքությունը գոյանում է այն սննդանյութերից, վորոնք կերի միջոցով մտնում են մարմնի մեջ։ Յերբ գոմը ցուրտ է լինում, տավարն աշխատում է սովորականից ավելի շատ ուտել, վորպեսզի իր մարմնի ընդհանուր տաքությունը չպակասի։ Մարմնի տաքության աստիճանի պակասելու պատճառով կենդանին հաճախ հիվանդանում է, յերբեմն ել սատկում։

Գոմը տաք պահելու համար հարկավոր է այսպես անել.

Աշնանը, յերբ դեռ տավարը դրսումն է պահվում, պետք է գոմի պատերի բոլոր ճեղքերը կալնել ու սվաղել կավացեխով։ Առաստաղի ճեղքերը նույնպես պետք է կալնել ու յերեսին կավ քսել, վրան ել հող փռել, կամ ցեխ քսել 2-3 վերշոկ հաստությամբ։ Գոմի դռները պետք է պինդ ծածկել, վոր վոչ մի ծակ ու ծուկ չլինի։ Պատուհանները նույնպես պետք է լավ ծածկել, ճեղքերը կալնել, վորպեսզի տաքությունը դուրս չգնա, գոմը չսառչի. հակառակ դեպքում ձմեռվա ընթացքում մեծ քա-

նակությամբ ավելորդ կեր կծախսվի, բացի այն, վոր տավարն ու հորթերը կարող են մրսել և հիվանդանալ։ Թե վորքան կախում ունի կովի ծախսած կերի քանակը գոմի տաքությունից, այդ վկայում են տավարատերերը, վորոնք նկատել են, վոր ցուրտ գոմում ձմռանը կովը 12-15 փութ խոտ ավելի յե ուտում, քան տաք գոմում, իսկ կաթ քիչ ե տալիս։ Հետեվաբար ձեռնտու յե, վոր մենք աշխատենք գոմը տաք պահել։

2) Գոմի ոդը պետք ե լինի մաքուր, թարմ, չոր յեվ վոչ շատ տաք։ Շատ տաք ոդը վատ ե ազդում տավարի առողջության և կաթնատվության վրա։ Այդպիսի գոմում տավարը վատ ե ուտում, քրտնում ե և ավելի շուտ կարող ե մրսել, քան չափավոր տաքություն ունեցող գոմերում։ Գոմի ոդի տաքության աստիճանը չպետք ե լինի $16,5^0$ Ց. բարձր։

Վորպեսզի պարզ լինի, թե մաքուր ոդը վորքան խոշոր նշանակություն ունի ընդհանրապես կենդանիների և մասնավորապես կաթնատու տավարի համար, անհրաժեշտ ե իմանալ, թե ինչ տարբերություն կա մաքուր և կեղտոտ ոդի մեջ։

Մաքուր ոդը բաղկացած ե 2 գազից՝ ազոտից յեվ թթվածնից։ Ազոտը կազմում ե ոդի $^4/_5$ մասը, իսկ թթվածինը՝ $^1/_5$ մասը։ Դրանցից ամենագլխավորը թթվածինն ե։ Առանց թթվածնի կենդանիները չեն կարող շնչել, այլ իսկույն կխեղդվեն, իսկ թթվածնով հարուստ ոդում կենդանիները լավ շնչում են և լավ ել ապրում։ Բացի ազոտից ու թթվածնից մաքուր ոդի մեջ գտնվում են նայեվ քիչ քանակությամբ ջրի գոլորշիներ և ածխաթթու գազ։ Ածխաթթու գազը դժվարացնում ե շնչառությունը։ Ինչպես հայտնի յե, շնչելու ժամանակ մենք ներշնչում ենք թթվածին ազոտի հետ, իսկ արտաշնչում ածխաթթու գազ նույն ազոտի հետ։ Վորքան ոդի մեջ ածխաթթու քիչ կա, այնքան ոդը մաքուր ե և այնքան ավելի հեշտ

է շունչ քաշել։ Ներշնչվող և արտաշնչվող օդերն իրարից տարբերվում են նրանով, որ ներշնչվող օդը հարուստ է թթվածնով, իսկ արտաշնչվողը՝ ածխաթթու գազով։ Ներշնչվող մաքուր օդի 100 մասից մոտ 20 մասը թթվածին է, իսկ ածխաթթուն մաքուր օդի 10.000 մասից մոտավորապես 3-4 մասն է կազմում։ Արտաշնչած օդի 100 մասից միայն 14-17 մասն է կազմում թթվածինը, իսկ մոտ 3-6 մասը ածխաթթուն։ Հետեվաբար արտաշընչած օդի մեջ ածխաթթուի քանակը 100-200 անգամ ավելի յէ քան ներշնչվող մաքուր օդում, իսկ թթվածինը $^1/_4$ չափով պակաս։ Ահա այս է թարմ օդի և խեղդուկ օդի մեջ յեղած տարբերությունը։ Յերբ կենդանին գոմում շնչում է, ածխաթթուն գոմում շատանում է, իսկ թթվածինը քչանում։ Յերբ գոմում ածխաթթուն շատ է, օդը խեղդուկ է լինում, վորովհետեվ ածխաթթուն ավելի ծանր է, քան օդը, նա հավաքվում է փակված դռների մոտ և վոչ միայն ինքը դուրս չի գնում, այլ և արգելում է, վոր դրսից մաքուր օդ ներս գա. այդ դեպքում տավարը դժվար է շնչում, լավ չի ուտում, արյունը չի մաքրվում և ներս շնչած ածխաթթուն աստիճանաբար թունավորում է ամբողջ արյունը։

Ընդհակառակը, թարմ օդում կամ օդափոխված գոմում կենդանիները հեշտությամբ են շնչում, լավ են ուտում և իրենց լավ են զգում։

Վորքան տավարի շնչած օդը մաքուր է, այնքան ավելի արագ և լավ է մաքրվում նրա արյունը, ավելի լրիվ է մարսվում ու յուրացվում նրա կերածը, ուստի և նա ավելի առողջ է լինում։

Մաքուր օդը նույն նշանակությունն ունի նայեվ բոլոր ուրիշ կենդանիների համար, ինչպես և մարդու համար։

Գոմի օդը մաքրելու և միատեսակ տաքություն պահպանելու համար անհրաժեշտ է այնտեղ շինել օդը դուրս քաշող և օդը մաքրող խողովակներ։

Ոգը մաքրող խողովակներից ամենագործնականն ու եժան Նստողը Մուիրի սիստեմով շինվող խողովակն է։ Այդ խողովակը շինվում է այսպես. վերցնում են 4 հատ դյուիմանոց տախտակ ամեն մեկը $^3/_4$ արշին լայնությամբ. տախտակները կպցնում իրար այնպես, որ ստանում են քառակուսի խողովակ. ապա այդ խողովակի միջին մասը 2 տախտակով բաժանում են 4 մասի (տես նկ. 1, 2 և 3)։

Խողովակն այդ ձևով շինելու դեպքում կեղտոտ օդը



Նկ. 1. Օդ մաքրող խողովակը.



Նկ. 2. Խողովակի ներսը տախտակներով բաժանված 4 մասի:

հեշտությամբ դուրս կծծվի և միաժամանակ փոխարենը թարմ, մաքուր օդ ներս կգա։



**Նկ. 3. ցույց է տրվում, թե ինչպես է օդը դուրս ու տուն անում խողովակի միջով։**

Խողովակի տակը ամրացվում է մի տախտակ, վորը խողովակի հատակի մակերդակից 2 անգամ մեծ պետք է լինի։ Այդ տախտակը նրա համար են ամրացնում, վորպեսզի մաքուր օդը հավասար չափով տարածվի գոմում։

Վորովհետեվ խողովակը ներսից բաժանված է 4 մասի, ուստի վորտեղից ել քամին փչելիս լինի, նա ներս կմտնի մի կամ յերկու բաժանմունքով, իսկ հակառակ կողմի յերկու բաժանմունքներից ներս ու դուրս կանի կեխտոտ օդը։

Խողովակի ներքևի մասում ամեն մի բաժանմունքի համար առանձին խուփ է շինվում, վորպեսզի ուժեղ քամիների ժամանակ և գոմի օդը մաքրելուց հետո փակվեն։ Մուխրի սիստեմի խողովակով օդը շատ հաջող է մաքրըվում։ Այդ խողովակով բավական մեծ չափով և արագությամբ դուրս է գնում կեղտոտ օդը և գոմի օդը բոլորովին մաքրվում է։ Պետք է միայն զգույշ լինել, վոր չափազանց յերկար ժամանակ բաց չմնան խողովակի խուփերը, մանավանդ ուժեղ քամիների ժամանակ, վորպեսզի գոմը չցրտի և տավարը չմրսի։

Մեկ այդպիսի օդ մաքրող խողովակը բավական է քսան կովի համար։ Մեր գյուղական փոքրիկ գոմերի համար նույնպես բավական է մեկ խողովակը։

Օդ մաքրող խողովակը պետք է կանգնեցնել գոմի մեջտեղը և վոչ թե կովերի գլխավերեվը, այնպես, վոր կեսը լինի առաստաղից ներքև, մյուս կեսը կտուրից վերև։

Գոմի ծավալը բավարար է համարվում այն ժամանակ, յերբ ամեն մի կովին ընկնում է $2^1/_2$ խորանարդ սաժ. օդ, այն էլ լավ օդամաքրության դեպքում։

3. Գոմը պետք է լինի լուսավոր։ Վոչ միայն կենդանիները, այլ և բույսերը կարիք ունեն լույսի։ Այսպես օրինակ՝ յեթե վերցնենք կարտոֆիլը, կամ վորևէ ուրիշ բույս և աճեցնենք նկուղում առանց լույսի, նա կլինի գունատ ու հիվանդոտ։

Գիտնականները դիտել ու փորձել են, վոր լույսի ազդեցության տակ սննդարար նյութերն ավելի արագ ու լիակատար են ընդունվում ու մարսվում մարմնի կողմից քան մթության մեջ։

Մութ ու խոնավ բնակարաններում սովորաբար բազմաթիվ հիվանդաբեր բակտերիաներ են առաջանում, վորոնք վարակում են թե կաթը և թե տավարին։ Մութ տեղում տավարը տխրում է, քիչ է ուտում, հետեվաբար

և կաթ քիչ է տալիս: Բացի այդ մութ գոմերում դժվար է տավարի առողջության վրա հսկել և անհարմար է աշխատել:

Վորպեսզի գոմը լուսավոր լինի, անհրաժեշտ է շինել լուսամուտներ: Վորքան գոմը լուսավոր է, այնքան լավ: Բայց վորովհետեվ շատ լուսամուտներ շինելը թանկ է նստում և շատ լուսամուտ ունեցող գոմն ավելի շուտ է սառչում, ուստի ստիպված ենք լուսամուտների համար քիչ տեղ թողնել, բայց վոչ այնքան, վոր մութ լինի և տավարի առողջության վրա ազդի: Վորպեսզի գոմը բավարար չափով լուսավորված լինի, լուսամուտները շինում են այն հաշվով, վոր գոմի հատակի ամեն մի 15-16 քառակուսի արշինին ընկնի 1 քառակուսի արշին լուսամուտ: Լուսամուտները պետք է շինել բարձր և պատի յերկարությամբ և վոչ բարձրությամբ: Վորպեսզի ձմրանը լուսամուտներից չփչի, լավ է կրկնակի ապակիներ անցկացնել և պետք է բոլոր ծակ ու ծուկերը լավ խցկել:

4. Տավարը լեռնային ցուրտ շրջաններում ել պետք է ձմեռը ժամանակ առ ժամանակ դուրսը՝ մաքուր օդում ման գա, վորքան այդ հնարավոր է: Բոլոր կենդանիների համար մաքուր օդում ազատ շարժումներ կատարելը խոշոր նշանակություն ունի: Ազատ շարժումներ անելիս կենդանու մարմինը պնդանում է և ավելի հեշտությամբ է դիմադրում զանազան հիվանդություններին:

Մատղաշ կենդանիների համար մաքուր օդում շարժումներ կատարելն ավելի կարեվոր է, քան մեծերի համար: Հորթին կանոնավոր մեծացնելու համար շատ կարեվոր են զբոսանքներ կատարելը և ընդհանրապես ազատ շարժումները, վորոնց շնորհիվ մարմնի բոլոր մասերը հավասարապես են զարգանում, ախորժակը լավանում է, կերը լավ է մարսվում և մարսված նյութերը ստամոքսի ու աղիքների պատերով մտնում են մարմնի արյան

մեջ ու ծառայում իբրեվ սննդանյութ։ Ընդհակառակը, յեթե մատղաշ կենդանիներին ձմրանը միշտ կապած ենք պահում, նրանք վատ են զարգանում, թույլ են լինում և հաճախակի հիվանդանում են։

5. Գոմը յեվ տավարը պետք ե մաքուր պահել։ Կենդանիների կաշին մի քանի կարեվոր նպատակների համար ե. այն ե, շնչելու, մարմնի տաքությունը միյեվնույն աստիճանի վրա պահելու, մարմնի քրտինքը դուրս հանելու յեվ մարմինը արտաքին վնասումներից պաշտպանելու համար։ Հասկանալի յե, վոր յերբ կաշին հիվանդանում ե, չի կարողանում այդ աշխատանքները կատարել։ Իսկ կաշին մեծ մասամբ հիվանդանում ե կեղտոտությունից։ Գիտնականները փորձել են, վոր յեթե կենդանու կաշվի $^1/_3$ մասը հիվանդանում ե և չի կարողանում վերեվ հիշված աշխատանքները կատարել, այդ դեպքում, չնայած լավ սնունդին և այլ լավ պայմաններին, նա սատկում ե։ Բացի դրանից կեղտոտ կաշի ունեցող տավարի կաթն էլ հեշտությամբ ե կեխտոտվում։ Ուստի անհրաժեշտ ե հետեվել, վոր տավարի մարմինը լինի մաքուր և չոր։ Պետք ե տավարին հաճախակի մաքրել և տակը ծղոտ կամ կերի կրճունքներ փռել։ Յերբ տավարը չի մաքրվում և կեղտոտ ե մնում, նրա վրա սկսում են զարգանալ զանազան վոջիլներ և պարազիտներ։ Այդ պարազիտներն ապրում են կովի մարմնի հաշվին, խրվում են նրա կաշվի մեջ և ծծում նրա արյունը։ Յեթե այդ պարազիտները շատ են լինում կովի մարմնի վրա, նրանք նախ շատ են անհանգստացնում կովին և դրանով ազդում կաթի քանակի վրա, յերկրորդ՝ կարող են մեծ քանակությամբ արյուն ծծել։ Իսկ մենք գիտենք, վոր արյունն առաջ ե գալիս կերից. հետեվաբար կեղտոտ կաշի ունեցող տավարը պետք ե ավելի շատ կեր ուտի, վորպեսզի պարազիտների ծծած արյան տեղը հանի։ Դա ձեռ-

նտու չե տավարատիրոջ համար, վորովհետեվ ավելորդ կեր ե կորչում։

Վորպեսզի տավարը լինի մաքուր և չոր, պետք ե օրական յերկու անգամից վոչ պակաս նրա տակը փոխել։ Ավելի լավ ե ծղնոտն ու կրճուղը քիչ-քիչ փռել տակը, բայց շուտ-շուտ, քան թե մի անգամ և շատ։ Տավարի տակը փռելու համար ամենալավը ծղնոտն ե կամ հարդը հաշված ամեն մի գլխին 5—6 ֆունտ։ Կերի թերմացքը նույնպես շատ լավ ե։

Բայց բավական չե միայն տավարի տակ չոր բան փռել. հարկավոր ե ամեն օր խոզանակով (շոտկով) մաքրել կաշին։ Յեթե գոմը տաք ե, շատ ցանկալի յե ձմրանը տավարին մի քանի անգամ լվանալ գոլ ջրով ու կանաչ սապոնով։ Լվանալուց հետո պետք ե լավ չորացնել մարմինը, վոր չմրսի։

*6.* Պետք ե աշխատել ձմռանը, մանավանդ սառ տեղերում, տավարին ջուր տալ գոմում։ Ջուրը պետք ե ամառվա ջրի պես տաք լինի, 15°—20° Ցելս։

Չի կարելի սաստիկ ցուրտ ժամանակ տավարին տանել գետը կամ առու՝ ջրելու համար, վորովհետեվ տավարը ցրտումը վատ ե խմում, կենդանիներն իրար խփում-հրում են, սառույցի վրա սայթաքում և վնասում են իրենց վոտներն ու պճեղները։ Բացի այդ սառը ջուր խմելուց հետո կովն սկսում ե դողալ, սրթսրթալ և ամբողջ մարմինը սառչում ե։ Իսկ մենք գիտենք, վոր նա իր սառած մարմինը և խմած սառը ջուրը տաքացնելու համար պետք ե ավելի շատ կեր ընդունի, վորը նույնպես ձեռնտու չե տավարատիրոջը։ Սառը ջրից կովերը կարող են և հորթատել։

Տավարի խմելու ջուրը պետք ե լինի մաքուր, առանց կողմնակի համ ու հոտի։

Ջրի ավազաններ։ Տավարին սառը ջուր չտալու նպատակով գոմի մի անկյունում շինում են 2 հատ ջրի

*ավազան։ Ամեն մի ավազան պետք ե այնքան ջուր տանի, վոր բավականացնի տավարին մի ամբողջ որ։ Մինչեվ մի ավազանի ջրի պրծնելը, մյուս ավազանի միջինը կամաց-կամաց գոլի տաքություն կստանա։ Այդպես հերթով լցնում ու գործածում են ջուրը։ Ավազանների մեծությունը կախված ե տավարի քանակից։ Ամեն մի կովի համար հարկավոր ե պատրաստել որական 3.5 դույլ ջուր։*

*Ավազանները լցնելու համար ջուրը դրսից դույլերով (վեդրոներով) բերելն անհարմար ե, վորովհետեվ այդ ժամանակ գոմի դուռը հաճախակի բաց ու խուփ անելիս գոմը կսառչի։ Ուստի դրա համար ավազանների կողքի պատից դեպի դուրս անցք են բաց անում։ Ջուրը դրսից գալիս—հոսում ե պատի միջով անցնող նավով և թափվում ավազանների մեջ։ Յերբ վոր ավազանները լցվում են ջրով, անցքը փակում են։ Ավազաններից ջուրը նույնպես դույլերով չեն կրում-տանում ու լցնում կովերի խմելու տաշտը, այլ առանձին շինած նավով ջուրը հոսում ե և գնում, թափվում տաշտերի մեջ։ Մեծ տնտեսություններում ջուրը հատուկ յերկաթե խողովակներով ե հոսում-թափվում խմելու տաշտերի մեջ։*

*Այնտեղ, վորտեղ անհնարին ե այս ձեվով ջուր տալը, լավ ե ջուրը կրել վեդրոներով և լցնել ավազանները ու այնուհետեվ ել ավազաններից լցնել խմելու տաշտի մեջ։ Վերջապես պետք ե աշխատել տավարին շատ սառը ջուր չտալ։ Տավարատիրոջից ե կախված թե ինչ ձեվով նա այդ կիրականացնի։*

7. **Յերբ կթվող կովերի հետ կոպիտ են վարվում յեվ անհանգստացնում են, նրանք կաթը պակասացնում են։** *Չպետք ե կովերին շուտ-շուտ փոխել մի տեղից մյուս տեղ։ Չպետք ե ծեծել բռունցքով կամ վոտով խփել կամ հրել և ընդհանրապես այս կամ այն*

կերպ անհանգստացնել։ Կովի հետ պետք է քնքուշ վարվել և նա կվարձատրի ձեզ հենց նրանով, որ ձեզ շատ կաթ կտա։

**8. Յեթե ուզում եք տավարին կանոնավոր ու խնայողաբար կերակրել, մսուրը կամ ախոռը այնպես պետք է սարքել, որ կովերը կերը չթափեն ոտքերի տակ։**

Մսուրը կամ ախոռը և ջրի տաշտը սովորաբար շինում են տախտակից կամ ցեմենտից. գյուղական տնտեսություններում համարյա միշտ տախտակից են շինում։

Հասակ առած կաթնատու տավարի մսուրի լայնությունը պետք է լինի 1 արշին, իսկ մանր տավարինը ¾ արշին։ Մսուրի հետևի կողմից խփում են 8 վերշոկ բարձրություն ունեցող մի տախտակ, որպեսզի կերը այդտեղից ներքև չթափվի։ Յեթե մսուրը ցեմենտից է շինած, բարձրությունը հատակից պետք է լինի 6-8 վերշոկ, իսկ յեթե տախտակից է, 8-12 վերշոկ։ Մսուրի տախտակները պետք է քիփ կպած լինեն իրար և ջրի տաշտին, որպեսզի կերը նրանց արանքից չթափվի ներքև։

Մսուրին անմիջապես կպած է լինում ջրի տաշտը։ Ջրի տաշտն այնպես են շինում, որ նրա վերին յեզրերը կպչի ուղիղ մսուրի յեզրերին. (տես նկ. 4) Ջրի տաշտի բարձրությունը հավասար պետք է լինի մսուրի բարձրությանը։ Փայտե ջրի տաշտը չպետք է կպած լինի գետնին, այլ նրա և հատակի միջև պետք է մնա ազատ տարածություն օդ խաղալու համար, թե չէ տաշտը շուտ կը փչանա։ Մսուրն ու ջրի տաշտը չպետք է լինեն այնքան բարձր, որ կովը դժվարանա հասնել և ուտել։ Ջրի տաշտի լայնությունը պետք է լինի 8 վերշոկ, իսկ խորությունը 4 վերշոկ։ Տաշտն այնպես պետք է լինի դրված, որ ջուրը նրա յերկու ծայրերում հավասար բարձրության վրա կանգնի։

Որպեսզի կովը ոտքերով չբարձրանա մսուրի վրա և կերն այնտեղից ոտքերի տակ չթափի, դրա համար



H 23868
ՀԱՅԿ. ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ



Նկ. 4. կովը կապած մսուրի մոտ.

Ջրի տաշտի հետեվի կողմից դեպի առաստաղը ուղղահայաց կերպով սյուներ են խփում և պատրաստում են քառակուսի շրջանակ, վորի միջից միայն կովը կարող է գլուխը մտցնել և հանել մսուրին կեր ուտելու համար (տես Նկ. 4)։ Շրջանակի բարձրությունը $1^{1}/_{4}$ արշին պետք է լինի, իսկ լայնությունը ամեն մի կովի համար 1 արշին 10-12 վերշոկ։ Ուտելու ժամանակ կովը պետք է գլուխը ներս կոխի շրջանակի անցքից։ Շրջանակն ամրացվում է սյուներին (տես Նկ. 5)։



Նկ. 5. կովը մսուրին կապելու ձևը

Նկար 6. ցույց ե տալիս անշարժ մսուրի դիրքը գոմում։

Ի հարկե, կարելի յե և ուրիշ ձևի մսուրներ պատրաստել, բայց միշտ ել պետք ե այնպես շինել, վոր հարմար լինի տավարի համար և կերը չթափվի վոտքերի տակ։

9) Տավարին կանոնավոր ձևով պահելիս ու կերակրելիս կերը տրվում ե վոչ թե աչքի չափով, այլ քաշով. ուստի գոմում պետք ե ունենալ կշեռք կեր քաշելու համար։ Կշեռքն այնպես պետք ե հարմարեցնել, վոր կարելի լինի արագ և առանց դժվարության կշռել կերը։ Ուժեղ կերերի համար սովորաբար մի առանձին չափ են ունենում (միաման), իսկ կոպիտ կերերի համար քթոց։ Մի անգամ կշռում են դրանց միջի կերը և այնուհետև



Նկ. 6. անշարժ մսուրի դիրքը գոմում

բաժանում են դրանցով կերերը և ամեն անգամ չեն կըշ-ռում։

10) Տավարը կանոնավոր պահելու և կերակրելու ժամանակ կերը տրվում է համապատասխան կթի քանակին, ուստի անհրաժեշտ է ամեն մի կովի կաթն առանձին կշռել կամ չափել, այսինքն, փորձնական կիթ անել, գոնե 10 օրը մի անգամ։ Առանց կաթը կշռելու հնարավոր չի տավարին կանոնավոր կերակրել, վորովհետեվ յեթե ամեն մի կովի տված կաթի քանակն առանձին չիմանանք, չենք կարողանալ վորոշել, թե վորքան կեր է հարկավոր նրան տալ, վոր շարունակի գոնե նույն քանակությամբ կաթ տալ և չպակասեցնի։

Նկ. 7-ի վրա ցույց է տրված հասարակ կշեռքը, վորով կշռում են կոպիտ կերերը։




Նկ. 7. Կովի չափելը Կլյուվեր-Շտրաուխի ձևով.
b c յերկարությունն է
c-d փաքը

Յեթե հնարավոր է, լավ կը լինի ամեն օր ամեն մի կովի տված կաթը կշռել, վորովհետեվ դրանով կարելի յե հսկել թե կովի առողջության և թե մաքուր կթելու վրա։ Յեթե օրական կթերի մեջ մեծ տարբերություն յերեվա,

այդ ցույց կտա, վոր կամ կովը հիվանդ է, կամ լավ չի կթված և կամ լավ չի կերակրված։

11) Կովերը միյեվնույն մեծության չեն լինում. կան խոշոր և մանր կովեր։ Ամեն մարդ էլ հասկանում է, վոր խոշոր կովը ավելի շատ է ուտում, քան փոքրը։ Բայց վորպեսզի ճիշտ կերպով գիտենանք, թե մի կովը մյուսից վորքան ավելի կամ պակաս կեր է պահանջում, պետք է իմանանք ամեն մի կովի կենդանի քաշը։ Կովի կենդանի քաշը կարելի յե իմանալ կշռելով և չափելով։

Կենդանի քաշը չափելով իմանալու շատ ձևեր կան։ Ամենաճիշտ ձևը Կլյուվեր Շտրաուխինն է, վորը ռուսական չափերի յե վերածել Ակ. Ա. Քալանթարը։ Այդ ձևը շատ անգամ կշեռքների միջոցով ստուգվել է և տվել է բավականին ճիշտ հետևանքներ։

Այս ձևով կովը չափելու համար այսպես ենք անում. կովին կանգնեցնում ենք ուղիղ տեղ բոլորովին ուղիղ դիրքով։ Հետո սանտիմետրների բաժանված ռուլետով չափում ենք կովի մարմնի յերկարությունը սկսած երու սրանկյունից մինչև նստոսկրի թումբը, ինչպես ցույց է տրված նկ. 7 ում։

Ապա ռուլետը դարձնելով մեջքի կողմը՝ չափում ենք կրծքի փաթը արմունկից մի թիզ հեռու, ինչպես նկարում ցույց է տրված։ Չափելու ժամանակ պետք է ռուլետը մի թեթեվ ձգել, վոր լավ կպչի մարմնին։ Այսպես վերցնելով յերկարության ու փաթի չափերը, Կլյուվեր Շտրաուխի աղյուսակի միջոցով հաշվում ենք իսկական քաշը ֆնտերով։ Այսպես որինակ, յեթե մարմնի յերկարությունը 156 սանտիմետր է, կրծքի փաթը՝ 180 սանտ. ապա այդ աղյուսակով կենդանի քաշը կը լինի 1088 գր. այսինքն 27 փ. 8 գրվ. (տես տախտակը գրքի վերջում)։

Յեթե սանտիմետրների բաժանված ռուլետկա չկա, կարելի յե վերշոկների բաժանված ռուլետկայով չափել։ (տես. նկար 8) (Տրուխանովսկու յեղանակը)։

Դրա համար վերշոկներով չափում են, ինչպես նըկարում ցույց է տրված, մարմնի յերկարությունը (սկսած ուսի գագ. մինչեվ պոչի արմատը), ապա չափում են կրծքի փաթը (թիակի հետեվից) և ստացված թվերը իրար հետ բազմապատկում են։ Ստացված թիվը ցույց է տալիս



Նկար 8

կենդանի քաշը արտահայտված ֆունտերով։ Օրինակ, յենթադրենք բազմապատկելուց ստացվեց 600. այդ նշանակի, վոր կովի կենդանի քաշը 600 ֆունտի է հավասար, այդ թիվը բաժանելով 40-ի վրա, կստանանք կենդանի քաշը փթերով, այսինքն 15 փութ։

Ինչպես վոր առանց կաթը կշռելու հնարավոր չի կովին կանոնավոր կերպով կերակրել, այնպես և առանց կենդանի քաշն իմանալու հնարավոր չի վորոշել թե վորքան կեր է հարկավոր նրա կյանքը պահպանելու համար։

Բացի կիթը և կենդանի քաշը պարզելուց, նախ քան կանոնավոր կերակրելուն անցնելը, հարկավոր է կովին լավ նայել և վորոշել նրա չաղությունը կամ լղարությունը, ծնելու ժամանակը, ցուլի գալու ժամանակը, այլև

քննել յեղած կերերը՝ նրանց լավն ու վատը վորոշելու համար։

## 3. ՏԱՎԱՐՆ ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Ե ՊԱՀԵԼ ԱՄԱՌԸ

Յեթե ձմրանը բավականին քանակությամբ լավ կեր ունենք և գոմը լավ ե շինված, կստանանք հավասարաչափ և բարձր կիթեր։ Իսկ ամառը, արոտում յեղած ժամանակ, կովի կիթերը ստացվում են նախ կանաչ խոտի վորակից, ապա նայած յեղանակից. այն ե՝ յերբեմն շոգից, յերբեմն ցուրտ քամիներից և անձրևներից։ Բացի այդ ձմրանը սովորաբար ավելի լավ ենք հետևվում տավարին ու կերակրում, մինչդեռ ամառը գյուղացիներն իրենց տավարը պահ են տալիս տավարածին։ Իսկ տավարածները մեծ մասամբ անչափահաս կամ պառաված մարդիկ են լինում, յերբեմն էլ խելքից թեթև մարդիկ։ Այդպիսի տավարածները խփում, ծեծում են տավարին, ուր մնաց թե լավ արածացնեն կամ թե չե ոգնեն պատահական հիվանդությունների ժամանակ։

Տավարին արածացնելու աննպաստ պայմաններից մեկն էլ արոտի հեռավորությունն ե։ Տավարն ամեն օր արոտ գնալու և հետ գալու համար յերկար ճանապարհ ե կտրում։ Տավարն արոտ գնալ գալիս ուժ ե կորցնում, իսկ մենք գիտենք, վոր այդ ուժը ստացվում ե կերից, հետևաբար արոտատեղում ստացած կերի մի մասը փոխանակ կաթ դառնալու, ծախսվում ե գնալ - գալու վրա։ Բացի այդ տավարը գնալ-գալուց հոգնում ե, վորը նույնպես ազդում ե կաթի քանակի վրա։

Տավարը հանդում արածացնելու գլխավոր պակասությունները հետևյալներն են՝ 1. վատ արոտները և նրանց հեռու գտնվելը գյուղից, գոմից կամ ուրթատեղից 2. վատ տավարածները, վորոնք կոպիտ են վարվում տավարի հետ, 3. յեղանակի խիստ փոփոխությունները—շոգ, ցուրտ և այլն. 4. միջատներն ու պարազիտները, վորոնք

անհանգստացնում են տավարին և 5. վատ ճանապարհները՝

Նախքան տավարի կերակրելու յեղանակին անցնելը մի քիչ կանգ առնենք արոտների գլխավոր պակասությունների վրա:

## 4. ՏԱՎԱՐԻ ՎԱՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՏՃԱՌՆԵՐԻՑ ՄԵԿԸ ՎԱՏ ԱՐՈՏՆ Ե

Բնական արոտներն այն դրությամբ, ինչ վոր մենք ներկայումս ունենք, մեր անասնապահությունը զարգացնելու ամենամեծ արգելքներից մեկն են հանդիսանում: Վորպես ընդհանուր կանոն, անասնաբուծությամբ զբաղվելիս մենք անպայման պետք ե հաշվի առնենք մեր ունեցած արոտը: Յեթե պահում ու բուծում ենք լավ կաթնատու կամ լավ մսացու տավար, առանց հաշվի առնելու այն հանգամանքը, վոր մեր արոտը տավարին չի կշտացնում և մենք էլ նրան տանը լրացուցիչ կեր չենք տալիս, ապա հասկանալի յե, վոր ամառվա ընթացքում մեր տավարի կաթնատվությունը կպակասի և նա մսից կընկնի: Վորովհետև մեր արոտները, մարգագետինները և ընդհանրապես կերի պայմանները վատ են, դուրս ե գալիս, վոր մենք կարող ենք զարգացնել միայն քիչ կաթ տվող և մանր տավար: Շատ տավարատերեր հենց այդպես էլ անում են. նրանք պահում են այնպիսի տավար, վորը հեշտությամբ ե դիմանում իրենց վատ արոտներին և պայմաններին: Հասկանալի յե, վոր այս դեպքում անասնապահությունը զարգացնելու մասին խոսք լինել չի կարող:

Կան ուրիշ տավարատերեր, վոր առանց լավացնելու արոտներն ու մարգագետինները, իրենց ազնվացեղ և կաթնատու տավարն ուղարկում են ճահճային կամ քարքարոտ ու խոտով աղքատ արոտները: Պարզ ե,

որ այդ դեպքում կատարյալ անհաջողություն կհանդիպեն։ Ազնվացեղ, քնքուշ տավարը վատ արոտում իրեն համար բավարար կեր չի գտնի, կնիհարի, կաթը կպակսեցնի և կհիվանդանա։ Հետևաբար վերոհիշյալ երկու դեպքումն էլ անասնապահության զարգացման մասին խոսք լինել չի կարող։

Մնում է ուրեմն երրորդ ճանապարհը, այն է՝ լավացնել արոտներն ու մարգագետինները. իսկ այդ նպատակին հասնելու համար հարկավոր է չորացնել ճահճուտ ու ճկճուտ տեղերը, արմատահան անել թփերն ու քոլերը, հավաքել քարերը և բացի այդ կանոնավոր մշակել արոտատեղերը, այսինքն ցաքանել, նոր լավորակ սերմեր ցանել լավ տեսակի խոտ ստանալու համար, փեյլինով, մոխրով և այլ նյութերով պարարտացնել և այլն։ Այս ձևով մշակված արոտատեղը կտա շատ առատ և սննդարար խոտ և հնարավոր կլինի պահել հասարակ տավարի փոխարեն ազնվացեղ, կաթնառատ տավար։ Արոտատեղերն այս ձևով մշակելը ամենամեծ միջոցներից մեկն է մեր տեղական տավարի որակը բարձրացնելու համար։ Ուրիշ խոսքով հարկավոր է ոչ թե տավարը հարմարեցնել մեր աղքատ արոտներին, այլ արոտը՝ տավարի պահանջներին։ Յեվ քանի որ մենք մեր արոտատեղերը չենք չորացնում, քարերից չենք մաքրում, չենք մշակում ու պարարտացնում, նրանք տարեց-տարի ավելի վատանում են և ուրեմն մեր տավարն էլ քանի գնում՝ մանրանում է ու վատանում։

Ուստի անհրաժեշտ է, որ ամենալուրջ ուշադրություն դարձնվի ձմեռվա և առանձնապես ամառվա արոտատեղերը կարգավորելու վրա։ Բացի հիշած կուլտուրական միջոցներից, որոնք անհրաժեշտ են բնական արոտների յեկամուտը բարձրացնելու տեսակետից, միաժամանակ անհրաժեշտ է նպատակահարմար ձևով վճռել արոտատեղերից օգտվելու հարցը՝ թե հասա-

բակությունների, թե արտերի և թե առանձին տավարատերերի համար։ Միայն այդ բարեկարգությունները մտցնելուց հետո կարելի կլինի լրջորեն մտածել մեր տավարի ազնվացման մասին։ Վերև հիշված կուլտուրական միջոցների գործադրումը մեծ չափով կախված է արոտատեղերի օգտագործման ձևերից։

Խոշոր նշանակություն ունեն և մեր հանդերի ճանապարհները։ Ոչ մի ծախսի առաջ չպետք է կանգնել մեր արոտների ճանապարհները կանոնավորելու գործում։ Վատ, քարքարոտ և գիրտ ճանապարհները տավարի համար տանջանք են։ Ով կարողացավ ամենից շուտ ազատել իր տավարն այդ տանջանքից, նա ամենից շատ կշահի։

## 5. ՄԻ ՔԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ ԱՄԱՌԸ ՏԱՎԱՐՆ ԱՐՈՏՈՒՄ ՊԱՀԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

Նախ քան տավարն արոտ հանելը պետք է նայել նրանց սմբակները, պճեղները։ Յեթե պճեղները յերկար են, պետք է կտրել, թե չէ դրսում կկոտրվեն և տավարը կկաղա։ Անհրաժեշտ է նայել կովերի յեղջյուրների (կոտոշ) ծայրերը սղոցել, վորպեսզի կովերն իրար չվիրավորեն։

Արոտ ուղարկելու առաջին որը հարկավոր է տավարին առավոտները ամեն մեկին 6.8 ֆ. խոտ տալ։ Յեթե խոտ չկա, կարելի յե և դարման տալ։ Դարմանը պետք է թրջել աղաջրի մեջ և խառնել ալյուրի թեփի հետ և մոտավորապես 3-4 ֆ. տալ ամեն մեկին՝ իսկ ավելի կաթնատու կովերին մինչև 8 ֆ. թեփ։

Յեթե արոտը աղքատ է և տնտեսության մեջ կանաչ խոտ չկա, այդպես շարունակում են կերակրել ամբողջ ամառը։ Ի հարկե, նայած թե ինչպիսի արոտ է և ինչքան կաթ է տալիս տավարը, ըստ այնմ էլ պետք է տալ լրացուցիչ կերը։ Վորքան արոտը աղքատ է, իսկ կովերը կաթնատու, այնքան ավելի շատ պետք է տալ լրացուցիչ կեր։

Ամառները մեզ մոտ՝ սարերում, շատ դժվար ե հետևել այս խորհուրդներին, քանի վոր այնտեղ անհնարին ե բավականի չափով կեր ունենալ տավարին լրացուցիչ կեր տալու համար։ Այդ վերաբերում ե մանավանդ այն տավարատերերին, վորոնց բնակավայրը գտնվում ե սարի ուրդից հեռու, այսինքն քոչվորներին։ Նրանք միանգամայն զրկված են ամառները սարերում գոնե կթի կովերը լրացուցիչ կերով կերակրելու հնարավորությունից։ Սակայն այն տավարատերերը, վորոնց բնակավայրը մոտ ե ուրդին և վորոնք չեն քոչում, նրանք միշտ ել ի վիճակի չեն կեր պահելու և կթի տավարը ամառները լրացուցիչ կերակրելու։ Շվեյցարիայում սարերը բաժանված են տավարատերերի վրա, վորոնք այնտեղ վորոշ համար հողաբաժիններ են ջոկում և գործ են ածում իբրև խոտհարք ու միշտ սարերում նրանք այդ նպատակի համար խոտ են ունենում, վորով և ցերեկները կերակրում են կթի տավարին։

Յերբ մեզ մոտ ել քոչը կվերանա և սարի արոտատեղերն այնպես կբաժանվեն, վոր յուրաքանչյուր հողամաս իր հատուկ մշակողը (համայնք, արտել, ընկերություն կամ անհատ) կունենա, այդ դեպքում ամեն մեկը հնարավորություն կունենա այդ սարերում ամառվա արոտի կերի պակասության դեպքում լրացուցիչ կեր ունենալու և կերակրելու իր տավարը դրանով։

Յերբեմն շատ կանաչ խոտ ուտելիս տավարը փորլուծ ե ստանում։ Դրա առաջն առնելու համար պետք ե կանաչ կերի վրա ցանել ջրի մեջ լուծված կավիճ։

Չպետք ե տավարին առավոտյան շաղին կամ թաց ժամանակ առվույտատեղերում (յոնջատեղ) արածացնել. դրանից տավարը կարող ե փքվել ու սատկել։ Հարկավոր ե սկզբում արածացնել սովորական արոտում և հետո տանել առվույտի վրա կամ թե չե տանը մի քիչ կերակրել

և հետո արոտ ուղարկել։ Փքվելու դեպքերի համար տավարածը պետք ունենա առանձին գործիք-բիզ (տրոակար)՝ տավարի փորն ուռած ժամանակ ծակելու համար և պետք է ծանոթ լինի նրա գործածության հետ։

Յեթե առավոտյան ցուրտ է լինում և յեղյամը նստած՝ չպետք է տավարը դուրս թողնել արածելու, քանի դեռ յեղյամը չի հալվել, հակառակ դեպքում հղի կովերը կարող են հորթատել։

Արոտավայրում պետք է լավ, մաքուր ջուր լինի, ջրի տեղը պետք է հարմար լինի, վոր տավարը կարողանա հասնել ու կուշտ խմել։

Ամառվա շոգ ժամանակ ավելի լավ է տավարն արածացնել յերեկոյան, գիշերը և կանուխ առավոտյան և վոչ թե կեսորին։

Յեթե տավարն ամառը արյուն է միզում (շռում), պետք է նրան մաքրել խոզանակով (չոտկով), լվանալ աղաջրով և քսել բենզինի յուղ։

Այս ձևով տավարն ապահով կլինի այդ հիվանդություններն առաջացնող տիզերից։

Յեթե հարմարություն կա, լավ կլինի տավարին ամառը լողացնել, բայց զգուշությամբ. չպետք է քշել ջրի մեջ հոգնած ու քրտնած ժամանակ, թե չե կարող է մրսել։

Չի կարելի նախիրի մեջ միաժամանակ 2 կամ մի քանի ցուլ թողնել, վորովհետև նրանք կկռվեն իրար հետ և կփչացնեն իրար։ Բացի այդ մրցելով իրար հետ նրանցից ամեն մեկն ուզում է ինքը տիրանալ ցուլ յեկող կովին և այդպիսով փախցնում են կովին և իրենք ել վազում նրա հետևից։ Մեր լեռնոտ, լանջ տեղերում այսպիսի դեպքերում ցուլերից հալածվող կովը շատ հաճախ գլորվում է ցած ու ջարդվում, իսկ նրա հետևից յերբեմն և ցուլերը։

# ՄԱՍՆ II

# ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Ե ԿԵՐԱԿՐԵԼ ԿԱԹՆԱՏՈՒ ՏԱՎԱՐԻՆ ԴԱՆԻԱՅՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՁԵՎՈՎ

## 6. ԻՆՉՈ՞Ւ ՊԵՏՔ Ե ԿԱԹՆԱՏՈՒ ՏԱՎԱՐԻՆ ԿԵՐԱԿՐԵԼ ԱՆՊԱՅՄԱՆ ԻՐ ՔԱՇԻ ՀԱՄԵՄԱՏ

*Թե ինչ վորակի ու քանակի կեր պետք ե տանք կաթնատու տավարին, այդ մեզանից ե կախված. մենք կարող ենք նրան տալ շատ կամ քիչ, լավ կամ վատ կեր։*

*Ի հարկե, լավ ու բնականն այն կը լիներ, յեթե մենք թողնեյինք, վոր տավարն իր ցանկության համաձայն ջոկեր այս կամ այն կերը և ուտեր այնքան, վորքան ինքը կուզենար, սակայն գործնականում այդպես չի կարելի անել, վորովհետև այդ դեպքում տավարը բնազդորեն կուտեր չափից դուրս, ավելի քան իրեն հարկավոր ե։ Բացի այդ, տնտեսության համար ել դա ձեռնտու չե, քանի վոր կովերից շատերը կուտեն ու կը փչացնեն մի քանի անգամ ավելի արժեք ունեցող կեր, քան թե իրենց տված կաթն արժե։ Այդ պատճառով մենք ստիպված ենք վերցնել զանազան տեսակի կերեր և կազմել նրանցից ամեն մի տեսակի տավարի համար առանձին որական կերաբաժին՝ միշտ ի նկատի ունենալով տավարի կենդանի քաշը, կաթնատվությունը և կամ կատարած աշխատանքը։*

*Առանձնապես մեծ նշանակություն ունի կենդանի քաշով կերակրելը կովին։*

*Կովի տված կաթի քանակը կախված ե նրա ստացած կերից. վորքան լավ կերակրենք կովին, այնքան նա շատ կաթ կտա։ Բայց պետք ե հիշել, վոր զանազան տեսակ կովեր են լինում. կան կովեր, վոր վորքան ել լավ կերակրենք, շատ կաթ չեն տա։ Բացի այդ միևնույն*

կովը տարբեր ժամանակներում տարբեր քանակությամբ կաթ է տալիս: Այսպես օր. ծնելուց հետո կովն ավելի շատ կաթ է տալիս քան ցամաքելուն մոտենալու ժամանակ, երբ նա կաթը քիչ-քիչ պակասեցնում է, թեկուզ նրան կերակրելիս լինենք նույնքան լավ որքան առաջ: Կամ մեկ ուրիշ օրինակ. այն կովը, որ օրական տալիս է 20 շիշ կաթ, ի հարկե ավելի կեր է պահանջում, քան թե այն կովը, որ օրական տալիս է 2 շիշ կաթ: Նույնպես չի կարելի միատեսակ կերակրել տարբեր կենդանի քաշ ունեցող կովերին: Օրինակ՝ եթե 30 փութ կենդանի քաշ ունեցող կովին տանք նույնքան կեր, որքանով 15 փութ կենդանի քաշ ունեցող կովը հազիվ է կշտանում, այդ դեպքում 36 փթանոց կովը սոված կը մնա: Կամ թե հակառակը, 15 փթանոց կովին տանք այնքան կեր, որքան բավարար է 30 փթանոց կովի համար, այդ դեպքում էլ 15 փթանոց կովը կը ստանա ավելորդ կեր: Նշանակում է, պետք չի կերակրել բոլոր կովերին միատեսակ, այլ ամեն մեկին պետք է կերակրել իր կենդանի քաշին համապատասխան:

Շատերը մինչև այժմ այն կարծիքին են, թե որքան տավարին շատ ու լավ կեր տանք, այնքան շատ կաթ կը ստանանք և զարմանում են, որ երբեմն կերի քանակը պակասեցնելիս կովերը կաթն ավելացնում են: Այդ առթիվ մենք կը հիշեցնենք տավարատերերին, որ կովի ստամոքսը կարող է ընդունել յերեք անգամ ավելի կեր, քան թե կարող է մարսել, և որ կովերը, եթե կերը համեղ է, ուտում են չափից ավելի, կշտանալուց հետո էլ: Մենք գիտենք, որ ստամոքսը մտած սնունդը մարսվում է ըստամոքսի գեղձերի արտադրած հյութի շնորհիվ, իսկ այդ հյութը անսպառ չէ. նա միայն որոշ քանակությամբ կեր կարող է մարսել, իսկ ավելորդ ընդունված կերը ստամոքսում չի մարսվում և նույն ձևով դուրս է գալիս և իզուր կորչում: Այդ նշանակում է, որ նրանից

կաթ չի ստացվում. բացի այդ, ավելորդ կերը ծանրաբեռնում է ստամոքսը և նրան անհանգստություն պատճառում։ Այդ ծանրաբեռնված ստամոքսը ճնշում է թոքերը և դրանով խանգարում կանոնավոր շնչառությունը, իսկ յերբ շնչառությունը կանոնավոր չէ, արյունն էլ լավ չի մաքրվում, ուստի կաթի կազմվելն էլ դանդաղում է։ Այստեղից պարզ է, վոր յեթե մենք թույլ չտանք, վոր կովը չափից դուրս ուտի և ծանրաբեռնի իր ստամոքսը, այդ դեպքում կաթը կը շատանա, յեթե նույն իսկ կերը պակասեցնենք։

Այսպիսով մենք ավելորդ անգամ գալիս ենք ու համոզվում, վոր չի կարելի կերակրել տավարին աչքի չափով, առանց կշռի ու հաշվի։

Ճիշտ չեն մտածում այն մարդիկ, վորոնք ասում են. «Ինձ լավ ու շատ կեր տվեք, ես գիտեմ վոնց կը կերակրեմ»։

Նրանք պետք է իմանան, վոր բացի լավ և առատ կեր ունենալուց անհրաժեշտ է կերակրելու ձևին էլ իմանալ, հարկավոր է ամեն անգամ կազմել որական կերաբաժին՝ համապատասխան կովի տված կաթի, կենդանի քաշի և այլն։ Ուրիշ խոսքով հարկավոր է կերակրել կանոնավոր և նորմայով։ Յերբ կենդանուն կերակրում են կաթի յեվ կենդանի քաշի համեմատ, ասում են, վոր տավարին կանոնավոր են կերակրում կամ նորմայով են կերակրում։

Ճիշտ որական կերաբաժին կազմելու համար պետք է իմանալ՝ 1) առանձին կերերի համեմատական արժանիքը սննդի տեսակետից, 2) վորքան կեր է հարկավոր զանազան կենդանի քաշ ունեցող կովին՝ իրեն առողջ պահելու համար. և 3) վորքան կեր է հարկավոր տալ կովին վորոշ քանակությամբ կաթ ստանալու համար։

Նախքան այդ հարցերին պատասխան տալը հարկավոր է բացատրել հետևյալը.—

Կաթնատու տավարի կերակրման համար մենք կարող ենք օգտվել միջին մոտավոր տվյալներով, թվերով. իսկ շատ ճիշտ տվյալներ կամ նորմաներ ստանալու համար պետք է փորձ անենք։

Պետք է փորձի համար կերակրենք ամեն մի կովի առանձին և միաժամանակ փորձենք ամեն մի տեսակի կերի արժանիքը և այս դեպքում մեր ստացած տվյալներն ու նորմաները ճիշտ կը լինին միայն այն կովերի ու կերերի համար, վորոնց վերաբերմամբ փորձը կատարված է, իսկ ուրիշ կովերի ու կերերի համար դրանք կը լինեն միայն մոտավոր թվեր ու նորմաներ։ Բոլոր կենդանիները, թեկուզ նրանք լինեն մի տեսակի, հավասարաչափ ընդունակություն չունեն միս կապելու, կաթ տալու և ույժ հավաքելու։

Նույնպես և բոլոր կերերը, վորոնք միյեվնույն չափով սննդարար չեն ու վոչ էլ հավասարաչափ շուտ մարսվող։ Որինակ խոտ էլ կա՝ խոտ էլ։ Մի տեսակ խոտը կարող է յերկու անգամ ավելի սննդարար լինել քան մի ուրիշ տեսակը չնայած վոր յերկուսն էլ խոտ են։ Հասկանալի յե, վոր կերակրելիս այս տարբերությունները ի նկատի պետք է ունենալ։

Մենք այս գրքում կտանք մոտավոր թվեր, վորպեսզի տավարատերերն այդ թվերը հիմք ընդունելով կարողանան կազմել իրենց տավարի հատկություններին ու կերի պայմաններին համապատասխան կերաբաժիններ և սխալմունքների մեջ չընկնեն։

Ինչ ձեվով կամ նորմայով էլ մենք կերակրելիս լինենք, **անհրաժեշտ է միշտ կշռել կաթը յեվ կերը**։

Յեթե մենք կշռենք կաթն ու կերը, այն ժամանակ մենք կը պարզենք, թե վորքան զանազան տեսակի կեր է հարկավոր տալ, վորպեսզի ստանանք վորոշ քանակությամբ կաթ (որինակ մեկ դույլ)։

Յեվ մենք արդեն առաջուց կատարած փորձի հիման

*վրա կարող ենք ասել, վոր վորպեսզի միջակ կաթնատու կովը նոր ծնելուց հետո որական մեկ դույլ կաթ տա, պետք է նրան տալ օրինակ՝ 25 ֆ. լավ յերեքնուկ (սի-բի-սիրի) և 6 ֆ. ցորենի թեփ։ Յեթե մենք այս քանակից ավելի կեր տանք, նա միյեվնույն է կաթը չի ավելացնի, ավելորդ կերը կը կորչի և գյուղացու դրամը կը վնասվի։*

*Կերերը կշռելու միջոցով նույնպես կարող ենք պարզել, թե տարբեր կենդանի քաշ ունեցող կովերին ինչ քանակությամբ և ինչ տեսակի կեր պետք է տալ։*

*Բացի այդ, կերն ու կաթը մշտապես կշռելու միջոցով կարող ենք պարզել նայեվ, թե ինչ չափով կարելի յե փոխարինել մի կերը մյուսով, այնպես, վոր վոչ կաթը պակասի և վոչ ել կովը լղարի։ Այս բանն իմանալը շատ կարեվոր է և անհրաժեշտ։ Մանավանդ յերբ ցանկանում ենք թանկ կերերը փոխարինել եժան կերերով, այնպես պետք է անենք, վոր թանկ կերերին փոխարինող եժան կերաբաժինը միյեվնույն չափով սննդարար լինի։*

*Միայն խիստ հաշիվ պահելով մենք կկարողանանք ձեռնտու կերպով ոգտագործել մեր կերերը։* Ուստի տավարին կերակրելու աշխատանքների ժամանակ մենք միշտ պետք է աչքի առաջ ունենանք չափը, քաշը յեվ հաշիվը։ Առանց այդ յերեքի անհնար է շահավետ տնտեսություն վարել։

## 7. ԿԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

### Ա. Ինչի՞ց են կազմված կերերը

*Այն բոլոր բուսական ու կենդանական ծագում ունեցող մթերքները, վորոնք կարող են կենդանիների համար իբրեվ սնունդ ծառայել, կոչվում են կեր կամ ճարակ։ Սակայն կենդանիների ընդունած կերն ամբողջովին չի մնում նրանց մարմնի մեջ և դառնում կաթ, միս և այլն, այլ միայն աննշան մասը, իսկ մնացած մեծ մասը*

դուրս է գալիս մարմնից վորպես Թրիք: Հետեվաբար կերը բաղկացած է յերկու տեսակ նյութերից 1) այնպիսի նյութերից վորոնք ընդունակ են մարսվելու և մնալու մարմնի մեջ և 2) այնպիսի նյութերից, վորոնք մարմնի մեջ չեն մարսվում և դուրս են թափվում վորպես Թրիք:

Կերի միջի այն նյութերը, վորոնք կարող են ստամոքսում մարսվել, պիտանի դառնալ կենդանու համար, կոչվում են **մարսվող սննդարար նյութեր**. իսկ այն նյութերը, վորոնք ընդունակ չեն ստամոքսում մարսվելու և օգտավետ լինելու կենդանուն, կոչվում են անմարս կամ **չմարսվող նյութեր**:

Բայց շատ դեպքերում պատահում է, վոր վոչ բոլոր մարսվող նյութերն են մարսվում ու յուրացվում կենդանու մարմնի կողմից, այլ նրանց մի մասը միայն:

Դրա պատճառները շատ են: Այսպես օրինակ. յեթե մենք տավարին տանք մեծ քանակությամբ համեղ կեր, նա կուտի ավելի, քան իր ստամոքսը կարող է մարսել և այդ ավելորդ կերածն ի զուր կը կորչի:

Սննդարար նյութերի մարսվելը կախումն ունի նայած նրանից, թե ամեն մի կեր ինչ դրությամբ և ինչ քանակությամբ է տրվում տավարին: Օրինակ, մի որվա կերաբաժնի մեջ մտած 10 ֆ. խոտը ավելի լավ կոգտագործվի, քան թե 20 կամ 30 ֆունտը: Կանաչ, թարմ խոտն ավելի լավ կմարսվի քան բորբոսնած խոտը և այլն: Բացի այդ տավարի հիվանդ կամ առողջ լինելն էլ մեծ նշանակություն ունի:

## Բ. **Կերերը բաժանվում են խմբերի**

Համաձայն իրենց արժանիքի բոլոր կերերը մենք կարող ենք բաժանել հետեվյալ խմբերին.—1) Չոր կոպիտ կեր, 2) Կանաչ կեր, 3) Արմատապտուղներ և Պալարապըտուղներ, 4) Ուժեղ կամ խտացրած կեր և 5) Կենդանական ծագում ունեցող կերեր.

1. ՋՈՐ ԿՈՊԻՏ ԿԵՐԻ *խմբին պատկանում են ամեն տեսակի խոտեր, առվույտը (յոնջեն) յերեքնուկը, վիկը, կորնգանը, զանազան տեսակի դարմաններ և այլն։ Ջոր կոպիտ կերը տարբերվում է մնացած կերերից նրանով, վոր հակառակ իր մեծ ծավալին, համեմատաբար պակաս սննդարար նյութեր է պարունակում։*

*Տավարատիրոջ համար շատ կարեվոր է իմանալ, թե ամեն մի տեսակի կեր ինչ ազդեցություն է թողնում տավարի առողջության և կաթի վորակի ու քանակի վրա։*

*Բացի այդ կարեվոր է իմանալ, թե ամեն մի կոպիտ կերից ի՞նչ քանակությամբ կարելի յե տալ տավարին, վոր նրան չվնասի։*

*Ընդհանրապես չոր կոպիտ կերը կերաբաժնի անհրաժեշտ և հիմնական մասն է կազմում։ Ի հարկե, յեթե տավարին տրվում է կանաչ խոտ, կարելի յե և առանց չոր կոպիտ կերի յոլա գնալ։*

*Յեթե կերաբաժնի մեջ չկան ուժեղ և ուրիշ վոչ կոպիտ կերեր, տավարի կանոնավոր մարսողությունը չի խանգարվում*, իսկ յերբ կերաբաժնի մեջ չկա բավարար քանակությամբ կոպիտ կեր, այն ժամանակ տավարի մարսողությունը խանգարվում է։

*Դրա համար շատ կարեվոր է իմանալ, թե ամենաքիչն ինչքան կոպիտ կեր (խոտ, դարման) պետք լինի կերաբաժնի մեջ, վորպեսզի տավարի կանոնավոր մարսողությունը չխանգարվի։*

*Յերբ վոր չափազանց շատ* վո՛չ կոպիտ կեր *ենք տալիս տավարին, (թեփ, քուսպ և այլն) դա վատ է ազդում նրա առողջության և կաթնատվության վրա։ Մինչդեռ յերբ սովորականից ավելի* կոպիտ կեր *ենք տալիս, նկատելի ազդեցություն չե անում վոչ առողջության և վոչ էլ կաթնատվության վրա, միայն թե տավարատիրոջ խոտի դեզը ժամանակից շուտ է վերջանում։*

*Թե որական կերաբաժնի մեջ վո՞րքան կոպիտ կեր*

պետք է մանի, այդ վորոշվում է կովի կենդանի քաշին համապատասխան և մեկ էլ նայած թե մյուս կերերից վորը կա տնտեսության մեջ և ինչ քանակությամբ։ Սովորաբար գործնականում ղեկավարվում են հետեվյալ կոպիտ—մոտավոր հաշվով։ Հաշվում են, վոր կովը բացի մնացած կերերից, յեթե չի ստանում արմատապտուղ կամ պալարապտուղ տակ զազար, կարտոֆիլ յեվ այլն), պետք է ստանա որական միջին թվով ամեն մի փութ կենդանի քաշին 1 ֆ. չոր կոպիտ կեր։ Որինակ, յեթե կովի կենդանի քաշը 13 փութ է, ապա նա պետք է ստանա մոտ 13 ֆ. կոպիտ կեր, իսկ յեթե կենդանի քաշը 21 փութ է, մոտ 21 ֆ.։ Կերաբաժնի մնացած մասերը կկազմեն ուժեղ կերերը կամ մի այլ կեր։ Իսկ յեթե տնտեսության մեջ խոտ ու դարման շատ կա և դրանք առատորեն կարելի յե գործածել, այն ժամանակ կարելի յե վերևում բերած միջին նորմայից ավելի կոպիտ կեր տալ տավարին՝ առանց նրան վնասելու։ Շատ կոպիտ կերը տավարին չի հղփացնում, վորովհետեվ նա միշտ լավ մասը ջոկում-ուտում է, իսկ մնացածը թափում է վոտքերի տակ։ Բայց թանկ կոպիտ կերից այդպես առատությամբ տալը ձեռնտու չէ։ Յեթե տավարին բավական քանակությամբ արմատապտուղ է տրվում, այն ժամանակ կարելի յե կոպիտ կերի քանակը պակասեցնել միջին նորմայից էլ ցածր։ Այսպես որինակ, 24 փութ կենդանի քաշ ունեցող կովին 60 ֆ. շաղգամ տալու դեպքում բավական է միայն 12 ֆ. չոր կոպիտ կեր տալ։ Իհարկե, կաթնատու կովին բացի վերոհիշյալ կերերից անհրաժեշտ է տալ նայեվ ուժեղ կերեր՝ համապատասխան իր տված կաթի քանակին։

Յեթե տավարին համեմատաբար մեծ քանակությամբ դարման ենք տալիս (որական ամեն մի գլխին 15 ֆ. ավելի), վորպեսզի ամբողջովին ուտի, անհրաժեշտ է դարմանը խաշել։ Յերկու տեսակ են խաշում. առաջին

դեպքում դարմանը լցնում են տակառների մեջ և խաշում են յեռացող ջրով կամ գոլորշիով, ապա թողնում են, որ կամաց-կամաց սառչի, սառչելուց հետո հանում-տալիս են տավարին։

Յերկրորդ դեպքում դարմանը լցնում են կիսատակառի կամ արկղների մեջ, մի լավ ծեծում-նստեցնում են, ապա թրջում են գոլ ջրով։ Հետո դարմանով լցված տակառները կամ արկղները վերեվից ծածկում են խսիրով, վրան դնում են տախտակներ, իսկ տախտակների վրա վորեվե ծանրություն։ Յերկու-յերեք օր հետո դարմանը խիստ կտաքանա և այն ժամանակ կարելի յե նրանով կերակրել տավարին։

Կերակրելու ժամանակ լավ կը լինի դարմանի վրա աղ անել և շաղ տալ ալյուր կամ թեփ։ Այդ ձևով տավարը դարմանն ավելի ախորժակով կուտի։ Վորպեսզի ամեն օր թարմ խաշած դարման լինի, ցանկալի յե ունենալ 3-4 արկղ կամ տակառ այն հաշվով, վոր յուրաքանչյուր տակառը կամ արկղը իր մեջ պարունակի օրական բոլոր կովերի համար անհրաժեշտ քանակությամբ դարման։

Բայց ինչքան էլ վոր կոպիտ կերը լավ լինի, կամ ինչ ձևով էլ վոր նրան պատրաստենք, այնուամենայնիվ միայն նրանով, առանց ուժեղ կեր կամ արմատապտուղ ավելացնելու չի կարելի մեծ քանակությամբ կաթ ստանալ, վորովհետեվ կոպիտ կերի մեջ քիչ քանակությամբ սննդարար նյութեր կան, իսկ կովը միայն սահմանափակ քանակությամբ կոպիտ կեր կարող է ուտել։

Շատ մասնագետների և տավարատերերի դիտողությունների համաձայն խոշոր կովը միջին հաշվով օրական կուտի 35-36 ֆ. կոպիտ կեր, նույնիսկ այն դեպքում, յեթե տված կերը բաղկացած լինի միայն առվույտից (յոնջայից)։ Բայց 35 ֆ. լավ առվույտից մենք կարող ենք ամենալավ դեպքում ստանալ մոտ 28 ֆ. կաթ,

*մինչդեռ լավ կաթնատու կովերը, բացի կոպիտ կերից նայեվ ուժեղ կեր տալու դեպքում, որական կարող են տալ մինչեվ 60 ֆ. կաթ (որինակ հոլլանդական կովը)։*

*Հիմա մենք անցնենք կոպիտ կերերի քննությանը առանձին առանձին։*

**Սովորական չոր խոտը։** *Յեթե խոտը քաղված է ծաղկելու սկզբին, նա ավելի սննդարար կը լինի, վորովհետեվ մատղաշ խոտն ավելի հեշտ է մարսվում, քան շատ հասածը։ Յեթե խոտը քաղում են ծաղկելուց հետո, այն ժամանակ նա կորցնում է իր սննդարարության 1/3 մասը։*

*Խոտի կերարժանիքը, բացի նրա քաղելու ժամանակից, կախումն ունի նայեվ նրա կազմից, այսինքն թե ինչ տեսակներից է կազմված նա։ Յեթե խոտի մեջ շատ կան յերեքնուկ, առվույտ (յոնջա), կորնգան վիկ և այլ թիթեռածաղիկ խոտեր, նա այնքան ավելի՝ սննդարար կը լինի և ընդհակառակը, վորքան հիշյալ տեսակի խոտերը քիչ են, իսկ նրանց փոխարեն շատ են ճահճային խոտերը, այնքան ել ուրեմն խոտը քիչ սննդարար կը լինի։*

*Ժամանակին հավաքած և չոր պահած խոտն ավելի սննդարար է, քան ուշ հավաքած, անձրեվի տակ ընկած և վատ պահած խոտը։*

**Առվույտ։** **(յոնջա)** *Կոպիտ կերից վոչ մեկն այնքան շատ չի գործածվում, վորքան առվույտը։ Յեթե բտելու (չաղացնելու) համար պահվող ջահել յեզներին առվույտ տանք, նրանք ավելի արագ կը չաղանան և միաժամանակ կը խնայվի վորոշ քանակությամբ ուժեղ կեր, վոր տրվում է չաղանալու համար։ Կթի կովի համար չկա առվույտից ավելի լավ կեր, վորովհետեվ առվույտը հարուստ է վոչ միայն սպիտակուցային նյութերով, այլեվ հանքային նյութերով վորոնք ամենաանհրաժեշտ նյութերն են կաթ առաջացնելու համար։*

*Մեզ մոտ շատ տեղերում առվույտ են ցանում։ Ցանկալի յե, վոր առվույտը ցանեյին վոչ միայն արա-*

նում և Ջրովի շրջաններում, այլև լեռնային մասերում՝ դեմի շրջաններում։

Իհարկե, վորքան էլ մենք շատ առվույտ ունենանք, կաթնատատ կովերին կերակրելիս չենք կարող բավականանալ միայն առվույտ տալով, այլ պետք է տանք և ուժեղ կերեր։

**Ցերեքնուկ** (սիրի-սիրի)։ Ցերեքնուկը (նրա բոլոր տեսակները) իր սննդարարությամբ շատ է մոտենում ուժեղ կերերին, բայց դրանից չի հետեվում, վոր լավ կաթնատու կովին կարելի յե կերակրել միայն յերեքնուկով առանց ալյուրի։

Ամեն մի կեր լավ է օգտագործվում տավարի կողմից այն ժամանակ, յերբ նա կերաբաժնի մեջ է մտնում միջին չափով։ Ընդհանրապես վորեվե կերից վորքան շատ է լինում կերաբաժնի մեջ (մանավանդ կոպիտ կերից), այնքան տվյալ կերը վատ է օգտագործվում։ Այսպես, յեթե օրինակ կերաբաժնի մեջ մտնում է 20 ֆ. յերեքնուկ, նա ավելի լավ կօգտագործվի կովի կողմից, քան յեթե նույն յերեքնուկից 35—40 ֆունտ լինի։ Բացի այդ, շատ կաթնատու կովեր կարողանում են տալ օրական մեկ դույլ (վեդրո) կաթից ավելի, հետևաբար կաթնատատ կովերի համար միայն յերեքնուկը բավական չե, անհրաժեշտ է նայև ուժեղ կեր։

Ցերեքնուկն ամենից շատ սննդարար է լինում այն ժամանակ, յերբ նրան հնձում ու չորացնում են նոր ծաղիկ տված ժամանակը։ Բայց տնտեսության համար ձեռնտու չե այդ ժամանակ հնձել յերեքնուկը, ուստի պետք է սպասել և հնձել լրիվ ծաղկելուց հետո։

Ցերեքնուկը հնձելու ժամանակ պետք է ուշադրություն դարձնել, վոր ծաղիկներն ու մանր տերևները չը պոկվեն ու թափվեն։

**Վիկ կամ վիկախոտ**։ Լավ ժամանակին (այսինքն մին-

չեվ լրիվ ծաղկելը) քաղած վիկն իր սննդարարությամբ հավասարվում է միջակ տեսակի յերեքնուկին։

Ինչպես վիկն, այնպես էլ յերեքնուկը լավ են ազդում կաթի թե վորակի և թե քանակի վրա։

Կորնգանը։ Կորնգանը նույնպես շատ սննդարար է և մեծ բերք է տալիս ու լավ աճում է քարքարոտ ու կրահողերում։ Նա պետք է հնձել ծաղիկն սկսելու ժամանակ, վոր խոտը շատ չկոշտանա։

Սրանցից հետո գալիս են ջրովի խոտհարքների յեվ արհեստական ցանվող խոտհարքների խոտերը։ Այդ խոտերը համարյա միատեսակ սննդարար են և կազմում են զանազան տեսակի խոտերի խառնուրդ։

Այս խոտերը, յեթե ժամանակին են հնձված ու լավ հավաքված, սննդարարությամբ շատ քիչ են հետ մնում յերեքնուկից։ Դրանք բոլորն էլ լավ են ազդում կաթի թե վորակի և թե քանակի վրա։ Ամենալավ կերաբաժինն այս տեսակ խոտերից օրական 20-24 ֆունտն է, բայց ի հարկե, կերաբաժինը պետք է համարեցնել կովի կենդանի քաշին և նկատի առնել և մյուս կերերը՝ օրինակ գարմանը. յեթե գարմանը շատ է, խոտ քիչ պետք է տալ և այլն։

Անջրդի խոտհարքների խոտը սննդարարությամբ շատ դեպքերում ցածր է լինում, քան վերևում հիշված խոտերը. նա շատ անգամ կազմված է լինում հասարակ խոտերից, օրինակ խրփուկ և այլն։

Այս տեսակ խոտը պետք է հնձել ծաղկելու սկզբին, վորովհետև ծաղկելուց հետո նա իր սննդարարության մեծ մասը կորցնում է։ Ուշ հնձելու դեպքում նա իր սննդարարությամբ համարյա հավասարվում է գարմանին և տավարը նրան ախորժակով չի ուտում։ Այս խոտը կաթի վորակի և քանակի վրա առանձին լավ ազդեցություն չի թողնում։

Պետք է ասել, սակայն, վոր մեզ մոտ անջրդի

տեղերում մեծ մասամբ բուսնում են լավ, պիտանի խոտեր, հարուստ թե՛ ցորենուկով ու յոնջայով և թե ուրիշ սննդարար բույսերով։ Մեր լեռնաշրջանի առաջնակարգ խոտհարքները դեմի յեն և շատ սննդատու։ Արփուկանման հասարակ խոտերը պատահում են մեծ մասամբ խամ թողած թույլ վարելահողերում։

**Անտառային խոտ։** Անտառային խոտից ստացվում է պինդ, սպիտակ և անհամ յուղ։ Կաթի առատության վրա շատ թույլ է ազդում։ Իր սննդարարությամբ գարնանացանի դարմանից մի քիչ բարձր է, յեթե քաղված է ծաղկելու ժամանակ։

**Թթու խոտ** (ճահճային կամ ճլոտ տեղերից)։ Բաղկացած է գլխավորապես բոշխից ու ղամիշից և այլ ճահճային խոտերից։ Սննդարարության կողմից ավելի ցածր է, քան գարնանացանի լավ դարմանը։ Թթու խոտը ոչ միայն լավ չի ազդում կաթի առատության վրա, այլ ընդհակառակը, հաճախ պակասեցնում է կաթը։ Բացի այդ, թթու խոտով կերակրելիս յերբեմն տավարի ստամոքսի խանգարում է նկատվում։

Թթու խոտի կաթն անհամ է և յուղը թույլ։ Յեթե կաթից շվեյցարական պանիր եք պատրաստում, այս տեսակ խոտով չպետք է կերակրեք կովերին և արածացնեք ճլոտ ու ճահճոտ տեղերը. պանիրն ուռչում է ու ճաքճքում։

Կա նույնպես, այսպես կոչված, **փայտախոտ-բոխ**։ Այս «խոտը» բոխը պատրաստվում է ծառերի մատղաշ ճյուղերից։ Ամառն այդ մատղաշ ճյուղերը պոկում ցախավելի նման գործում և չորացնում են։

Ձմրանն այդ չոր ցախավելները խաշում են յեռման ջրով, կտրատում և տալիս են տավարին։ Վորտեղ անտառ շատ կա, փայտախոտը կերի պակաս տարիներին կարող է փրկել տավարին սովամահությունից, յեթե նրան ավելացնենք քիչ քանակությամբ ուժեղ կեր։

Չի կարելի բոխ պատրաստել փշատերև ծառերի, կաղնու, ճապկու, հոնի և մի քանի տեսակ տոլպառատ ուռիների ճյուղերից, որովհետև այդ տեսակ ծառերից պատրաստած բոխը տավարի փորկապ է առաջ բերում։

Դարման։ Գյուղական տնտեսություններում կոպիտ կերերի գլխավոր մասը (ըստ քանակի) կազմում է դարմանը։ Կաթնատու տավարի համար ամենալավ դարմանը համարվում է վարսակի դարմանը, ապա գարու դարմանը, նրանից հետո էլ ցորենի դարմանը։ Վարսակի դարմանն իր կերարժանիքով յերկու անգամ պակաս է գնահատվում յերեքնուկից, այսինքն 1 փ. յերեքնուկի սնունդը հավասար է յերկու փ. վարսակի դարմանի սնունդին։

Տավարին ձմրանը կերակրելու ժամանակ ցանկալի յե, որ օրական կերաբաժնի մեջ մտնի գոնե 5 փ. դարման ամեն մի գլխին։ Սակայն դա պարտավորեցուցիչ չէ, յեթե տավարին տրվում է շատ խոտ։ Գարնան դարմանն ավելի լավ է քան աշնան դարմանը։

Յերբ կովին շատ դարման ենք ուտեցնում, ստացվում է պինդ, սպիտակ և անհամ յուղ։

Աշորայի (տարեկանի, չոլդարի) դարման։ Սա որպես կաթնատու տավարի կեր այնքան էլ նշանավոր չէ, որովհետև նախ պակաս սննդարար է, հետո էլ տավարը ախորժակով չի ուտում։ Գարու և ցորենի (աշնանացան) դարմանների հետ համեմատած նա յերրորդ տեղն է բռնում իր սննդարարությամբ։ Կերի պակասության դեպքում կարելի յե սրանով կերակրել տավարին, միայն թե պետք է աղ շաղ տալ վրան և խառնել ուժեղ կերերի հետ։ Յեթե տավարին տրվում է մեծ քանակությամբ ճակընդեղ ուժեղ կերի հետ, այս դարմանը կարող է փոխարինել ամբողջ կոպիտ կերին։ Այս դեպքում նա մեծ նշանակություն ունի, որովհետև մարսողությունը կանոնավոր է պահում։

Մղեղ.— Մղեղն ընդհանրապես ավելի սննդարար

նյութեր է պարունակում, քան նույն տեսակի դարմանը։

Մղեղի պակասությունն այն է, որ նա սովորաբար փոշոտ է, մեջը հող և զանազան ծակող քիստեր շատ կան, մանավանդ գարու, աշորայի և ցորենի մղեղի մեջ։ Այդ պատճառով տավարին մղեղով կերակրելիս հաճախ հացաբաթերթիկը (յերրորդ ստամոքսը) կեղտակալվում է, փորկապ է լինում և ընդհանրապես մարսողությունը խանգարվում է։

Մեզ մոտ մղեղը մաքուր դրությամբ չի լինում, այլ միշտ խառնված է լինում դարմանի հետ։

2. ԿԱՆԱՉ ԿԵՐ.—Կանաչ կերերից լավ է ազդում կովի կաթնատվության վրա կանաչ յերեքնուկը, յոնջեն, վիկը, կորնգանը, մարգագետնի և ցանվող կանաչ խոտերը և ընդհանրապես հարուստ արոտների խոտերը։

Կանաչ առվույտով պետք է կերակրել մինչև լրիվ ծաղկելը. ծաղկելուց հետո նա փայտանում է և քիչ սննդարար է դառնում։ Մեծ քանակությամբ առվույտ ուտելու դեպքում կովի փորը կարող է ուռչել, փորլույծ է լինում և յերբեմն էլ կարող է հորթատել։

Կանաչ կերին են պատկանում նաև զանազան արմատապտուղների ու պալարապտուղների թփերն ու տերեվները (որ. կաղամբի, կարտոֆիլի, տակի և այլն)։ Կաղամբի տերեվները իրենց սննդարարությամբ այս կերերի շարքում առաջին տեղն են բռնում։ Նրանք խիստ շատացնում են կաթը. բայց որական ամեն մի կովին 25-30 ֆունտից ավելի չի կարելի տալ որպես լրացուցիչ կեր։ Շատ ուտելիս կովը փորլույծ է սառնում և կաթն ընդունում է կաղամբի համ։ Նույնը կարելի յե ասել և թթվեցրած կաղամբի մասին։

Գազարի տերեվից թարմ դրությամբ ամեն մի կովին առանց վնասելու կարելի յե մինչև 60 ֆ. տալ. այս քանակությունը վոչ փորլույծ կառաջացնի և վոչ էլ կաթի վրա վատ կազդի։

Ճակնդեղի (տակի) տերեվներից *թարմ դրությամբ ամեն մի կովին որական 40 ֆնտից ավելի չի կարելի տալ։ Շատ ուտելու դեպքում կովը փորլուծ է ստանում և կաթն ու յուղը փչանում են։*

Կարտոֆիլի տերեվներով *հում դրությամբ տավարին չպետք է կերակրել, կարելի յե խաշել կամ սիլոս*) պատրաստել և այնպես տալ որական ամեն մեկին 20 ֆնտից վոչ ավելի։*

Թե շաղգամի (турнепс) յեվ թե բողկի տերեվներից *որական ամեն մի կովին 30-40 ֆնտից ավելի չե կարելի տալ։*

Գոնգեղի (брюква) տերեվները մի քիչ ավելի լավ են՝ *նրանից կարելի յե ամեն մի կովին մինչեվ 1 փութ տալ։*

## 3. ԱՐՄԱՏԱՊՏՈՒՂՆԵՐ ՅԵՎ ՊԱԼԱՐԱՊՏՈՒՂՆԵՐ—

*Այս խմբի կերերից կարտոֆիլը ամենասննդարար կերն է։*

*Ավելի լավ է կարտոֆիլը հում դրությամբ տալ որական ամեն մի կովին 30 ֆնտից վոչ ավել։ Լավ է ուրիշ կերերի հետ տալ 10 ֆնտից վոչ ավել։ Յեթե ստացված կաթից պետք է շվեցարական պանիր պատրաստել, բոլորովին չի կարելի տավարին կարտոֆիլ տալ։*

*Պետք է կարտոֆիլը նախապես սառը ջրի մեջ թրջել, ապա կտրատել և այնպես տալ տավարին։ Սառած ու ծլած կարտոֆիլ չի կարելի տալ տավարին, վորովհետեվ հղի կովերը կարող են հորթատել։ Տավարը մեծ քանակությամբ կարտոֆիլ ուտելիս փորլուծ է լինում, և կաթից ստացվում է ճարպանման յուղ։*

Գազարը *արմատա — պալարապտուղներից ամենալավն է իբրեվ տավարի կեր։ Չափազանց լավ է ազդում թե տավարի առողջության վրա և թե կաթնամթերքների համի, գույնի և քանակության վրա։*

*Յուղ պատրաստելու և կաթը հում ծախելու դեպքում որական ամենաշատը 50 ֆ. գազար կարելի յե տալ կովին. իսկ պանիր պատրաստելու դեպքում՝ 25 ֆ.։ Գազարը պետք է հում-հում տալ տավարին։*

---

**) Հատուկ հորերում ձմեռվա համար թթու դրած կանաչ կերը կոչվում է սիլոս։*

**Ճակնդեղ** *(բազուկ) կարելի յե որական ամեն մի կովին մինչեվ 2 փութ տալ, առանց կովի առողջության, կաթին ու յուղին վնաս տալու։*

*Պանիր պատրաստելու դեպքում կովին որական 25 ֆնտից ավելի ճակնդեղ չի կարելի տալ։ Ճակնդեղը պետք ե տալ հում դրությամբ։*

**Շաղգամ** (турнепс) *իր կերարժանիքով ճակնդեղից բավական ցած ե կանգնած։*

*Ամենաշատը որական 100 ֆ. շաղգամ կարելի յե տալ ամեն մի խոշոր կովին։ Ռուսաստանի մի քանի տնտեսություններում տալիս են մինչեվ 120 ֆ. ամեն մի կովին*)։ Պանիր պատրաստելու դեպքում չի կարելի 25 ֆնտից ավելի շաղգամ տալ։*

**Գոնգեղի** (брюква) *մասին համարյա թե նույնը կարելի յե ասել։*

*Վորպես արդյունաբեր կեր, շաղգամը ամենից ձեռնտուն ե, վորովհետեվ զարգանում ե 8-10 շաբաթվա ընթացքում առատ բերք ե տալիս և եժան ե նստում։*

**Գետնախնձորը** *(տոպինամբուր) իր կերարժանիքով հիշեցնում ե կարտոֆիլին, թեյեվ գետնախնձորն ավելի ջրալի յե, հեշտությամբ ե մարսվում և տավարը ախորժակով ե ուտում։ Գետնախնձորն աշնանը մի ինչ վոր դառնություն ե ստանում, այդ պատճառով այդ ժամանակ տավարն ախորժակով չի ուտում։ Գարնան դեմ այդ դառնությունն անցնում ե։ Որական բաժինը ամեն մի կովի համար 25 ֆունտից ավելի չպետք ե լինի, թե չե կաթը դառն համ կստանա։ Յեթե մտադրություն կա տավարը չաղացնելու, կարելի յե մեծ քանակությամբ գետնախնձոր տալ։*

---

**) Այդքան մեծ քանակությամբ արմատապտուղին պետք ե սովորեցնել կամաց-կամաց։ Բացի այդ, այստեղ ցույց տրված քանակությունը ամենաշատն ե և ինկատի յե առնված համեմատաբար խոշոր և մեծ կենդանի քաշ ունեցող տավարը։*

4. ԽՏԱՑՐԱԾ ԿԵՐ (զանազան տեսակի ալյուրներ, թեփեր և քուսպեր). խտացրած կամ ուժեղ կերը կաթնատու կովի կերաբաժնի ամենաանհրաժեշտ մասն է կազմում: Այս կերը մյուս կերերից գլխավորապես տարբերվում է նրանով, վոր փոքր ծավալի մեջ պարունակում է շատ սննդարար նյութեր: Ուժեղ կերի քանակը ընդհանրապես ամեն մի որական կերաբաժնի մեջ պետք է լինի 2 ֆունտից վոչ պակաս և 15 ֆունտից վոչ ավել: Ուժեղ կերի որաբաժինը չպետք է միայն մի տեսակից լինի. ցանկալի յե, վոր նրա մեջ լինեն միաժամանակ և՛ ալյուր, և՛ թեփ և՛ քուսպ:

Յերբեք չի կարելի կաթնատու տավարին ուժեղ կեր տալ հատիկի ձևով, այլ միշտ պետք է ալյուր դարձնել:

Սննդի ուժեղությամբ առաջին տեղն են բռնում քուսպերը (կոպտոնները): Ամենալավ քուսպերը համարվում են արևածաղկի և կտավատի քուսպերը:

Կտավատի քուսպն առաջինից ավելի սննդարար՝ է և նրանով քիչ քանակությամբ կերակրելիս նա կաթնամթերքների վրա վոչ մի վատ ազդեցություն չի անում: Արևածաղկի քուսպից որական 7-8 ֆնտից ավելի չի կարելի տալ ամեն մի կովին, իսկ կտավատի և կանեփի քուսպերից՝ 6 ֆունտից վոչ ավելի:

Բողկուկի քուսպը անգուրեկան դառը համ է տալիս կաթին, ուստի նրան լավ կլինի չտալ տավարին, կամ տալ շատ քիչ:

Բամբակի քուսպը նույնպես կարելի յե տալ կաթնատու կովին, բայց որական 3-4 ֆնտից վոչ ավելի: Բամբակի սերմը նույնպես լավ է, բայց որական 2-3 ֆնտից ավել չպետք է տալ. նա կարող է կենդանուն վնասել:

Վարսակի ալյուր.—Իր սննդարարությամբ քուսպերից հետո գալիս է վարսակի ալյուրը: Վարսակի ալյուրից ել

չի կարելի շնչին 8 ֆնտից ավելի տալ։ Շատ քանակությունը կաթի վրա վատ է ազդում։

**Յեգիպտացորենի ալյուրը** լավ է ազդում կաթնատվության վրա և տալիս է պինդ, դեղին յուղ։ 8 ֆնտից ավելի չի կարելի տալ ամեն մի կովին։

**Գարու ալյուրն** ավելի օգտակար է չաղացվող տավարի համար։ Առանց կենդանուն վնասելու կարելի է տալ մինչև 12 ֆ. որական։ Գարի ալյուրով կերակրելիս ստացվում է կակուղ, բայց համեղ յուղ։

**Աշորայի ալյուրը յեվ աշորայի թեփը** կաթնատու տավարի համար ավելի պակաս արժեք ունեն,—քան հիշված ուժեղ կերերը, վորովհետև գրգռիչ կերպով են ազդում և շատ ուտելիս թուլացնում են մարսողությունը։

**Սիսեռն ու բակլան** ավելի պետքական են չաղացվող տավարին, քան թե կաթնատուին։

**Ցորենի ալյուրի թեփը** շատ հիանալի սննդարար կեր է կաթնատու տավարի համար։ Լավ է ազդում կաթնամթերքների վորակի և քանակի վրա, բայց որական 10 ֆնտից ավել չպետք է տալ ամեն մի շնչին։ Շատ տալու դեպքում տավարը փորլույծ է լինում։

**5. ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԿԵՐԵՐ.**—կաթ, թան, պանրի շիճուկ։

**Սերես քաշած (կաժ) կաթ, շիճուկ յեվ թան.**—Այս կերերն ավելի օգտակար կլինի տալ ջահել տավարին, քան կթի տավարին։ Բայց դրանցից յերբեմն կթի տավարին ել են տալիս մինչև 2 դույլ ամեն մեկին։ Չի նկատված, վոր այդ կերերից առանձնապես կաթը ավելանա, բայց տավարի փորկապ յեղած ժամանակ շատ լավ են ազդում ստամոքսի վրա և մարսողությունը լավացնում են։

## 8. ԻՆՉՊԵՍ ՓՈԽԱՐԻՆԵԼ ՄԻ ԿԵՐԸ ՄՅՈՒՍՈՎ

(Համաձայն Դանիական նորմաների)

### Ի՞ՆՉՆ Է ԿԵՐԻ ՄԻԱՎՈՐԸ

Յենթադրենք, ուզում ենք իմանալ, թե մի կերի մի գրվանքան ուրիշ կերի քանի գրվանքով կարելի է փոխարինել, այն պայմանով միայն, որ այդ փոխելուց տավարի կաթը չպակասի։ Դրա համար վերցնում ենք հայտնի սննդարարություն ունեցող կերից որոշ քաշ և դրա հետ համեմատում ենք մնացած բոլոր կերերը. այսինքն ընդունում ենք դրան իբրև միավոր։

Ո՞ր կերն է ավելի հարմար միավորի տեղ ընդունելու. դրա համար պետք է ընտրել այնպիսի կեր, որի հատկությունները շուտ չեն փոխվում, այլ որոշ չափով կայուն են և մնում են համարյա անփոփոխ։ Այդ տեսակետից բոլոր կերերի մեջ իր այդ հատկությամբ աչքի է ընկնում ուժեղ կերը. այսինքն զանազան տեսակ ալյուրները, թեփերն ու քուսպերը։ Դրա համար էլ դանիացիք առանձին կերերի արժանիքներն իրար հետ համեմատելու համար վերցրել են 1 ֆ. ուժեղ կերերի խառնուրդ, որ կազմված է $^{1}/_{3}$ ֆ. ալյուրի թեփից, $^{1}/_{3}$ ֆ. արեվածաղկի քուսպից և $^{1}/_{3}$ ֆ. ալյուրից։ Այդ 1 ֆ. խառնուրդ ուժեղ կերը ծառայում է որպես չափ մնացած կերերի արժանիքը որոշելու համար և կոչվում է **կերի միավոր** (ինչպես օրինակ արշինը յերկարության միավոր է, փութը ծանրության միավոր, այդպես էլ 1 ֆ. խառնուրդ ուժեղ կերը կոչվում է կերի միավոր)։

Կթի տավարի վրա փորձեր կատարելով դանիացիներին հաջողվել է մոտավորապես պարզել, թե կերի միավորի կամ 1 ֆ. խառն ուժեղ կերի փոխարեն ուրիշ կերերից որքան պետք է վերցնել, որ կովը նույն սնունդն ստանա և կիթը չպակասի։ Այսպես օրինակ. յենթադրենք, թե կթի կովի կերաբաժնից պակասցրել

ենք մի քանի ֆ. խառն ուժեղ կեր կամ մի քանի կերի միավոր (որը միեվնույն բանն է)։ Պարզ է, որ եթե ամբողջ կերաբաժինն այնքան է, որ հազիվ է կշտացնում կովին, ուրեմն օրական կերաբաժնից օրինակ 3 ֆ. ուժեղ կեր պակասեցնելիս կաթն էլ կպակասի։ Հասկանալի յե, որ եթե հիմա մենք ցանկանում ենք, որ կովը էլի առաջվա չափ կաթ տա, պետք է վերադարձնենք նրան կերաբաժնից հանած 3 միավորը կամ 3 ֆ. խառնուրդ ուժեղ կերը։ Բայց կիթը նախկին չափին հասցնել մենք կարող ենք ոչ միայն վերադարձնելով կերաբաժնից հանած 3 միավորը կամ 3 ֆ. խառն ուժեղ կերը, այլ և տալով ուրիշ տեսակի կերեր, միայն թե այն քանակությամբ, որ նրանք իրենց սննդանյութերով հավասար լինեն 3 ֆ. ուժեղ կերին։ Օրինակ՝ կերաբաժնից պակասեցրած 3 միավորի փոխարեն մենք սկսում ենք կերաբաժնին կամաց-կամաց ավելացնել, օրինակ՝ այնքան առվույտ (յոնջա), մինչեվ որ կովը սկսի տալ նախկին քանակությամբ կաթ։ Ենթադրենք, որ մենք ընդամենը ավելացրինք 6 ֆ. լավ առվույտ ու ստացանք կաթի նախկին քանակը, ուրեմն փորձը ցույց տվեց, որ 6 ֆ. առվույտը տալիս է նույնքան կաթ, որքան 3 ֆ. խառնուրդ ուժեղ կերը կամ 3 միավորը։ Այստեղից հետեվում է, որ 1 կերի միավորին կարող է փոխարինել 2 ֆ. առվույտը (եթե 3 միավորին փոխարինում է 6 ֆ. յոնջան, ուրեմն մեկ միավորին կփոխարինի 2 ֆ. յոնջան)։ Այս ձեվով կարելի յե պարզել և մյուս կերերի արժանիքը 1 ֆ. խառնուրդ ուժեղ կերի հետ կամ 1 կերի միավորի հետ համեմատած։

Կաթնատու տավարի կերակրման վերաբերյալ կատարված բազմաթիվ փորձերի հիման վրա գիտնականները կարողացել են պարզել, որ 1 ֆ. խառնուրդ ուժեղ կերը պարունակում է մոտավորապես նույնքան սնունդ, որքան հետեվյալ կերերն առանձին-առանձին (ուրիշ խոս-

քով ներքեվում բերած կերերի քանակն առանձին-առանձին կարող է փոխարինել 1 կերի միավորի)։

## ՈՒԺԵՂ ԿԵՐԵՐ

1 ֆ. ալյուր (զանազան տեսակներից խառնուրդ) հավասար է 1 կերի միավորի
¾ ֆ. արեվածաղկի քուսպը » 1 » »
¾ ֆ. կտավատի » » 1 » »
1 ֆ. բողկուկի » » 1 » »
1 ֆ. կանեփի » » 1 » »
1 ֆ. ցորենի ալյուրաթեփ » 1 » »

## ՋՈՐ ԿՈՊԻՏ ԿԵՐԵՐ

3 ֆ. մարգագետնի խոտը հավասար է 1 կերի միավորի
4 ֆ. ճահճային (ճլոտ) » » 1 » »
2—2½ ֆ. յերեքնուկը » 1 » »
2½—3 ֆ. առվույտը (յոնջա) » 1 » »
4—5 ֆ. գարնան դարմանը » 1 » »
5—6 ֆ. աշնան դարմանը » 1 » »

## ԿԱՆԱՉ ԿԵՐԵՐ

12 ֆ. դաշտի խոտը հավասար է 1 կերի միավորի
14 ֆ. մարգագետնի խոտը » 1 » »
10 ֆ. կանաչ վիկն » 1 » »
8 ֆ. » յերեքնուկ » 1 » »
15 ֆ. ճակնդեղի տերեվ » 1 » »
10 ֆ. գազարի » » 1 » »

## ԱՐՄԱՏԱ-ՅԵՎ—ՊԱԼԱՐԱՊՏՈՒՂՆԵՐ

8—10 ֆ. ճակնդեղը հավասար է 1 կերի միավորի
10—12 ֆ. շաղգամը » 1 » »
8 ֆ. գազարը » 1 » »
6 ֆ. կարտոֆիլը » 1 » 1

## ՄՆԱՑԱԾ ԿԵՐԵՐԸ

6 ֆ. յերես քաշած կաթը հավասար է 1 կերի միավորի

| | | | | |
|---|---|---|---|---|
| 12 ֆ. պանրի շիճուկը | » | 1 | » | » |
| 10 ֆ. թանը | » | 1 | » | » |
| 8—10 ֆ. սելոսը | » | 1 | » | » |

Ուրիշ խոսքով 1 ֆ. ալյուրն իր մեջ պարունակում է նույնքան սնունդ, վորքան 3 ֆ. մարգագետնի չոր խոտը, 8 ֆ. կանաչ յերեքնուկը, կամ 6 ֆ. կարտոֆիլը և այլն։ Կամ թե կարելի յե ասել, վոր 1 ֆ. ալյուրն իր սննդով մոտավորապես համապատասխանում է 1 կերի միավորի, 1 ֆ. մարգագետնի չոր խոտը $=1/3$ կերի միավորի, 1 ֆ. կանաչ յերեքնուկը $=1/8$ կերի միավորի և այլն։ Բայց մենք ընդգծում ենք, վոր այս տախտակը կերերի համեմատական արժանիքի մասին տալիս է միայն կոպիտ-մոտավոր թվեր։

Այս տախտակով ոգտվելիս մենք պետք է լավ հիշենք, վոր կերերի մարսելիությունը (բացի շատ ուրիշ պատճառներից) կախում ունի նայեվ նրանից, թե ինչ քանակությամբ է նրանցից տրվում տավարին։ Այսպես որինակ. յեթե որական կերաբաժնի մեջ մտնում է 15 ֆ. յերեքնուկ, նա ավելի լավ կոգտագործվի կովի կողմից, այսինքն յերեքնուկի ամեն մի ֆունտն ավելի շատ կաթ կտա, քան յեթե կերաբաժնի մեջ 15 ֆնտի փոխարեն մտնի 30 ֆ. յերեքնուկ։ Նույնը կարելի յե ասել մյուս կերերի վերաբերմամբ։ Բացի այդ, ճիշտ կազմված կերաբաժինը պետք է իր մեջ պարունակի զանազան կերեր. այսինքն կազմված չպետք է լինի միայն մի տեսակի կերից։ Դրա համար ել մի կերը մի ուրիշ կերով փոխարինելը կարելի յե կատարել միայն վորոշ սահմաններում։ Այդ սահմաններն առանձնապես կարևոր է գիտենալ, յերբ ուժեղ կերերը փոխարինում ենք կոպիտ կերերով։

(Տես աղյուսակ յերես 53)։

Կթի տավարի մի կերը մի ուրիշով փոխարինելիս չի կարելի հիշած տախտակում ցույց տված կերաբաժնի

չափից են կողմն անցնել. (այդ տախտակում ցույց են տված միայն կլոր-մոտավոր թվեր, որոնք ստացված են գործնական աշխատանքների ընթացքում)։

Ամառվա արոտից ստացած կովի կերի քանակը որոշվում է ձմրան կերի և ստացվող կաթի համեմատ։ Այսպես՝ եթե կովը ձմրանը իր կյանքի պահպանման համար պահանջում էր օրական 8 կերի միավոր, այսինքն այնքան կեր, որ իր սննդով հավասար լինի 8 ֆ. ուժեղ կերին, ապա նույն կովն ամառն արոտում պիտի ուտի օրական այնքան կեր, որն իր սննդով հավասար լինի 9 կերի միավորի։ Արոտում կովը պետք է ուտի մի միավոր ավելի նրա համար, որ ամառը շատ շարժումներ է է անում և ուժ է սպառում։

Նմանապես, եթե կովը ձմրանն ամեն մի կերի միավորի դիմաց տալիս էր 3 ֆ. կաթ, ապա նա ամառն ամեն մի 3 ֆ. կաթ արտադրելու համար արոտում պետք է ուտի 1 ֆ. ուժեղ կերի չափ սնունդ պարունակող կեր կամ 8 ֆունտ կանաչ յերեքնուկ, որը հավասար է մեկ կերի միավորի։

Օրինակ, եթե միջին մեծության կովն ամառն արոտում առանց լրացուցիչ կերի տալիս է 21 ֆ. կաթ, ուրեմն նա արոտից վերցնում է մոտ 16 միավոր կեր. այսինքն այնքան կեր, որը իր արժանիքով հավասար է 16 ֆ. ուժեղ կերին։ Այդ 16 կերի միավորը ստացված է հետևյալ ձևով.

Դանիացիք փորձի միջոցով հաստատել են, որ միջին մեծության (օր. 24 փթանոց) կովը թե ամառը և թե ձմեռը իր կյանքը պահպանելու համար պահանջում է 8 կերի միավոր, իսկ յուրաքանչյուր 3 ֆ. կաթ արտադրելու համար ելի մի կերի միավոր։ Հետևաբար վերևում հիշված 21 ֆ. կաթ տվող կովը պահանջում է իր կյանքի պահպանման համար 8 միավոր, 21 ֆ. կաթ ար-

*Այս տախտակը ցույց է տալիս, թե ինչպես պետք է փոխարինել մի կերը մյուսով՝ պահպանելով կերերի նորմալ քանակը կերաբաժնի մեջ։*

| | ԿԵՐԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | Ամեն մի կերից մոտավորապես ինչքան պետք է վերցնենք 1 կովի համար օրական կերաբաժին կազմելիս | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Խոշոր կով, կենդանի քաշ 27-35 փ. | | Միջակ կով կենդանի քաշ 20-26 փ. | | Մանր կով, կենդանի քաշ 12-19 փ. | |
| | | մեծ կթվոր | միջակ կթվոր | մեծ կթվոր | միջակ կթվոր | մեծ կթվոր | միջակ կթվոր |
| Ուժեղ կամ խտացրած կերեր | Արեվածաղկի քուսպ | 8 | 4 | 7 | 3 | 6 | 2 |
| | Կտավատի » | 6 | 4 | 5 | 3 | 4 | 2 |
| | Բողկուկի » | 4 | 2 | 3 | 1 | 2 | 1 |
| | Կանեփի » | 6 | 4 | 5 | 3 | 4 | 2 |
| | Ցորենի թեփ | 12 | 8 | 10 | 7 | 8 | 6 |
| | Աշորու » | 8 | 6 | 7 | 5 | 6 | 4 |
| | Գարի | 12 | 8 | 10 | 6 | 8 | 4 |
| | Վարսակ | 8 | 6 | 7 | 5 | 6 | 4 |
| | Յեգիպտացորեն | 8 | 6 | 7 | 5 | 6 | 4 |
| | Աշորա | 8 | 6 | 7 | 5 | 6 | 4 |
| | Սիսեռ | 6 | 4 | 5 | 8 | 4 | 2 |
| Չոր կամ մեծածավալ կերեր | Մարգագետնի խոտ | 20 | 15 | 15 | 12 | 12 | 9 |
| | Վիկա | 26 | 20 | 20 | 16 | 16 | 12 |
| | Կարմիր յերեքնուկ | 26 | 20 | 20 | 16 | 16 | 12 |
| | Տիմոֆեյ խոտ | 20 | 15 | 15 | 12 | 12 | 9 |
| | Առվույտ | 20 | 15 | 15 | 12 | 12 | 9 |
| | Վարսակի ղարման | 12 | 8 | 10 | 6 | 6 | 4 |
| | Գարու » | 12 | 8 | 10 | 6 | 6 | 6 |
| | Աշորու » | 8 | 6 | 6 | 5 | 5 | 4 |
| | Ցորենի (աշն.) » | 8 | 6 | 6 | 5 | 5 | 4 |
| Կանաչ կամ դյուրա-մարս կերեր | Կանաչ հասարակ խոտ | 120 | 90 | 100 | 70 | 80 | 60 |
| | » վիկա | 120 | 90 | 100 | 70 | 80 | 60 |
| | » յոնջա | 70 | 60 | 60 | 50 | 50 | 40 |
| | Ճակնդեղի տերեվ | 50 | 40 | 40 | 30 | 30 | 20 |
| | Կարտոֆիլ | 28 | 16 | 20 | 12 | 16 | 10 |
| | Ճակնդեղ | 100 | 60 | 80 | 50 | 60 | 40 |
| | Շաղգամ | 100 | 60 | 60 | 40 | 50 | 30 |
| | Գազար | 50 | 40 | 40 | 30 | 30 | 20 |

տաղրելու համար 7 միավոր և 1 ավելորդ միավոր էլ ուժեղ շարժումներ կատարելու համար, ընդամենը 16 միավոր։ Յեթե արոտը վատ է, կովին որական 16 կերի միավոր չի տալիս, կովը լղարում է և կաթը պակասեցնում։

Այս տախտակի մեջ հիշված կոպիտ կերերի քանակները վերջնական չեն, կարելի յե և այդ քանակություններից ավելի վերցնել. այստեղ ցույց է տված, թե մոտավորապես ինչ քանակությամբ վորեվե կոպիտ կեր կարելի յե փոխարինել ուրիշ կերերով։ Մնացած կերերի համար արդեն ցույց է տված այն քանակությունները, վորոնց սահմաններում կարելի յե փոխարինել մի կերը մի ուրիշով, առանց տավարի առողջության և կաթի վրա ազդելու։ Յեվ վորպեսզի նույն քանակությամբ կաթ ստանանք, անհրաժեշտ է, վոր կովին տանք լրացուցիչ կեր։

Յեթե տավարն ամառը լրացուցիչ կեր է ստանում, այդ դեպքում արոտի կերարժանիքը վորոշելիս պետք է կերի միավորների ընդհանուր թվից դուրս գալ այդ լրացուցիչ կերի միավորները և մնացածը ցույց կտա, թե տավարը քանի կերի միավոր է ստանում արոտից։ Որինակ. յենթադրենք, վոր մենք ըստ կերի և ըստ կենդանի քաշի վորոշել ենք, վոր կովը որական պետք է ստանա մոտ 17 միավոր կեր, իսկ տանը մենք նրան տալիս ենք 2 միավոր ուժեղ կեր, հետևաբար մեր կովը արոտից ստանում է 15 միավոր կեր։

Հասկանալի յե, վոր այդ ձևով արոտի կերարժանիքը վորոշելն այնքան էլ ճիշտ չե, բայց համենայն դեպս նա ավելի մոտ է իրականության, քան ուրիշ շատ ձևերը։ Ընդհանրապես կերի միավորների հետ ծանոթանալով հեշտությամբ կկարողանանք կերերի վերաբերյալ զանազան հարցեր վճռել, առանձին կերերն ըստ իրենց

արժանիքի իրար հետ համեմատել, մեր տարվա կերի պաշարը միավորներով հաշվել և այլն։

Բայց այդ դեպքում պետք է հիշել, վոր մի քանի կերերի ուժը խիստ տատանվում է։ Այսպես որինակ, խոտի սննդարարությունը կախված է նրա կազմի մեջ մտնող զանազան տեսակ խոտերից, հնձելու ձևից և ժամանակից։ Այդ պատճառով յերբ ուզում ենք վորոշել, թե տվյալ խոտի քանի ֆունտը մի միավոր կեր է կազմում, հարկավոր է ծանոթանալ նրա մեջ մտնող խոտերի տեսակների հետ և վորոշել նրա հնձելու ժամանակը։ Նույնպես և մնացած կերերը պետք է նախապես նայել, տեսնել, փչացած չե՞ն, միջին արժանիքի՞ յեն և ապա վերածել կերի միավորների։

Ընդհանրապես դանիական կերի միավորներն ոգտագործելիս մենք պետք է հիշենք, վոր նրանք զանազան կերերի արժանիքի նկատմամբ տալիս են միայն կոպիտ մոտավոր պատկերը։

## 9. ՏԱՐԲԵՐ ԿԵ՛ՆԴԱՆԻ ՔԱՇ ՈՒ՛ՆԵՑՈՂ ՏԱՎԱՐԻՆ Ի՞ՆՉ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԿԵՐ Է ՀԱՐԿԱՎՈՐ ԻՐ ԱՌՈՂՋ ԳՈՅՈՒԹՅՈՒ՛ՆԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

(Կենսապահ կեր)

Կերի այն մասը, վոր անհրաժեշտ է կենդանուն իր առողջ գոյությունը պահպանելու համար, կոչվում է կենսապահ կեր։ Կենսապահ կերի քանակը վորոշվում է տավարի կենդանի քաշի համաձայն․ վորքան կենդանին ծանր է, այնքան ավելի պահպանող կեր է հարկավոր նրան։

Դանիացիների դիտողությունների համաձայն հասակ առած կովն իր առողջ գոյությունը պահպանելու համար պահանջում է ամեն մի 3 փութ կենդանի քաշին մոտավորապես 1 միավոր կեր (չհաշված այն կերը, վորը գնում է կաթի կազմվելու և դեռ չծնած հորթի սնունդի

համար)։ Որինակ, յենթադրենք, թե կովի կենդանի քաշը 27 փութ է, հետեվաբար վերոհիշյալ կանոնի համաձայն այդ կովն իր առողջ գոյությունը պահպանելու համար կպահանջի որական 9 միավոր կեր (27:3=9), այսինքն այնքան կեր, վորն իր սննդարարությամբ հավասար լինի 9 ֆ. ուժեղ կերի։ Յեթե կովը միայն խոտով է կերակրվում, այն ժամանակ հարկավոր կլինի 27 ֆ. լավ խոտ (վորովհետեվ 3 ֆ. լավ խոտը հավասար է 1 միավորի, ուրեմն 9 միավ. հավասար կլինի 27 ֆ. խոտի)։ Հետեվաբար դուրս է գալիս, վոր իր առողջ գոյությունը պահպանելու համար ամեն մի կովի 1 փութ կենդանի քաշին պիտի հաշվել մոտ 1 ֆ. խոտ։ Իսկ յեթե տավարին խոտ չի տրվում, այլ դարման, այն ժամանակ, վորպեսզի ունենանք 9 միավոր կեր, պետք է վերցնենք 36 ֆ. դարման (9×4)։ Բայց վորովհետեվ տավարն այդքան մեծ քանակությամբ դարմանը ախորժակով չի ուտում և դժվար է մարսում, ուստի նրա մի մասը՝ այն է 16 կամ 20 ֆ. փոխարինվում է ուրիշ կերով, որինակ. թեփով։ 16 ֆ. դարմանի փոխարեն պետք է վերցնել 4 ֆ. թեփ, ստացվում է այսպիսի կերաբաժին.

20 ֆ. դարման=5 կերի միավոր
4 ֆ. թեփ =4 » »

Ընդամենը=9 կերի միավոր

Ընդհանրապես գործնականից պարզված է, վոր ձեռնտու չե կաթնատու տավարին տալ 20 ֆնտից ավելի դարման, վորովհետեվ ախորժակով չի ուտում և լավ չի ոգտագործում։ Հենց նույնիսկ 20 ֆ. ել լավ ոգտագործելու համար պետք է թրջել աղաջրով, խաշել և մի քիչ ալյուր կամ թեփ խառնել հետը։

Յեթե մենք ունենք և՛ խոտ և՛ դարման, այն ժամանակ մենք կարող ենք կենսապահ կերի համար անհրաժեշտ միավորները կազմել այդ յերկու կերից՝ տարբեր

հարաբերությամբ։ Օրինակ, կարողենք 5 կերի միավոր տալ վորպես խոտ (5×3)=15 ֆ. և 4 միավոր կեր իբրև դարման (4×4)=16 ֆ.։ Իսկ յեթե կովը կերակրվում ե միայն առվույտով, այն ժամանակ կպահանջվի $(9\times2^1/_2)=$ $=22^1/_2$ կամ 23 ֆ. առվույտ։

Այսպես ուրեմն, մենք արդեն ունենք 4 հատ որական կերաբաժին միյեվնույն 27 փութ կենդանի քաշ ունեցող ցամաքած կովի համար։ Այդ 4 կերաբաժիններն ել մոտավորապես միյեվնույն սնունդն են պարունակում, սակայն նրանք կարող են տարբեր գներ ունենալ։

| | | | |
|---|---|---|---|
| I | կերաբաժին | 27 ֆ. լավ խոտ | =20 կ. |
| II | » | 20 ֆ. դարման<br>4 ֆ. թեփ | =18 կ. |
| III | » | 15 ֆ. լավ խոտ<br>16 ֆ. դարման | =19 կ. |
| IV | » | 23 ֆ. առվույտ | =23 կ. |

Կերերը հաշված են մինչպատերազմյան գներով—փութը՝
առվույտ—40 կ.
խոտ —30 կ.
դարման —20 կ.
թեփ —80 կ.

Կարելի յե ելի ուրիշ շատ կերաբաժիններ կազմել՝ պահելով հետևյալ կանոնները. հարկավոր ե՝ 1) աշխատել վոր կերաբաժնի մեջ ամեն մի փութ կենդանի քաշին 1 ֆ. կոպիտ կեր ընկնի, իսկ ընդհանրապես կերաբաժնի մեջ 15 ֆ. պակաս և 35 ֆ. ավել կոպիտ կեր չլինի։ Շնչին 15 ֆ. կոպիտ կերից պակաս թույլատրելի յե տալ այն ժամանակ, յերբ կերաբաժնի մեջ արմատապտուղ շատ կա. 2) կերի միավորների թիվը մեր արած հաշվից չպետք ե պակաս լինի. 3) կերաբաժնի մեջ դարմանի քանակը 20 ֆնտից ավելի չպիտի լինի (հասկանալի յե, վոր յեթե տնտեսության մեջ դարման շատ կա և նա առանձին գին չի ներկայացնում, կարելի յե 20 ֆ-ից ավելի դարման տալ. այդպիսի դեպքում կովը դարմանի լավ մասերը կջոկի—կուտի, իսկ մնացածը կթափի) և 4) հղի (թեկուզ և ցամաքած) կովին պետք ե որական կերաբաժնի հետ 2 ֆ. վոչ պակաս ուժեղ կեր տալ։

Վերոհիշյալ կերաբաժինները բավարար են միայն

բոլորովին առողջ, հասակ առած ստերջ, այսինքն՝ չկթվող և վոչ էլ հղի կովերի համար։

Ջահել, նոր մեծացող, ինչպես նայև հղի ու կթի կովը պահանջում է վերոհիշյալ կերաբաժնից բացի էլի վորոշ քանակությամբ կեր թե իր մեծանալու, թե հորթը մեծացնելու և թե կաթ պատրաստելու համար։

Ջահել կովին, բացի անհրաժեշտ կերի միավորներից, պետք է տալ նայև օրական 1-2 միավոր կեր։ Օրինակ, մի ջահել կով, վորի կենդանի քաշը 21 փութ է, պահանջում է օրական վոչ թե 7 (21:3), այլ (7+1)=8 միավոր կեր։ Ավելորդ 1 ֆ. կերը տրվում է կովի աճելու-մեծանալու համար։

Հորթի մեծանալու համար հղի կովին բացի պահպանող կերից պետք է տալ նայև օրական 1 միավոր կեր հղիության սկզբին*), $1^1/_2$ միավոր կեր հղիության միջին մասում, իսկ 2 միավոր կեր վերջին մասում։ Օրինակ, մի ծանրած կով 24 փութ է. նրա կյանքը պահպանելու համար հարկավոր է (24:3)=8 միավոր կեր, իսկ հղիության սկզբին հորթի մեծացման համար հարկավոր է տալ նայև մեկ միավոր, հետեվաբար ընդամենը 9 միավոր կեր։

Կենսապահ կերը կազմվում է գլխավորապես դարմանից և խոտից։

Ինչպես մենք արդեն ասել ենք, ցամաքած բայց հղի կամ ծանրած կովերի համար կերաբաժին կազմելիս ցանկալի յե մտցնել վոչ պակաս 2—3 ֆ. ուժեղ կեր։

Կենսապահ կերի քանակը վորոշելիս պետք է նայև ի նկատի ունենալ հետեվյալ հանգամանքը. տավարի քաշը մեծանալու հետ միյեվնույն չափով չի մեծանում նրան անհրաժեշտ կերի քանակը։ Այդ քանակը, արտահայտ-

*) Հղիության սկիզբը համարվում է ցուլի գալուց հետո միայն 3 ամիս, միջին շրջանը՝ 3-6 ամիս, իսկ վերջինը 6-9 ամիս։

ված կերի միավորներով, տատանվում է 6-ի և 12-ի մեջ:

Ինչպես ցույց են տվել գանիացիների դիտողությունները, ինչպես նայեվ մի քանի գիտնականների ուսումնասիրությունները, անհրաժեշտ կերի քանակը կենդանի քաշից այնքան ուժեղ կերպով չի ազդվում, վորքան կաթնարտադրությունից և մարմնի մակերեվույթի մեծությունից: Վորքան կովը մեծ է, այնքան ավելի քիչ մարմնի մակերեվույթ է ընկնում ամեն մի փութ կենդանի քաշին, իսկ վորքան կովը փոքր է, այնքան ավելի մեծ մարմնի մակերեվույթ է ընկնում ամեն մի փութ կենդանի քաշին. իսկ վորքան մարմնի մակերեվույթը մեծ է, այնքան շուտ նա կսառչի, ուստի այնքան ավելի կեր կպահանջի մարմնի տաքությունը պահպանելու համար:

Բայց 40 փթանոց կովը չի պահանջում ուղիղ 2 անգամ ավելի կեր, քան 20 փթանոցը: Յեթե այդ յերկու կովերը հավասար չափով կաթ են տալիս, այն ժամանակ 40 փթանոց կովը կպահանջի 20 փթանոցից $1^1/_2$ անգամ ավելի պահպանող կեր, և վոչ թե 2 անգամ:

## ԿԵՆՍԱՊԱՀ ԿԵՐԻ ԱՎԵԼԻ ՃՇՏԱԾ ԹՎԵՐ
### ԿԵՐԻ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ

(Կազմել է պրոֆ. Ե. Ֆ. Լիսկուն)

| Կենդանի քաշ | Կերի միավոր | կենդանի քաշ | կերի միավոր |
|---|---|---|---|
| 15 | 5,9 | 29 | 9,2 |
| 16 | 6,2 | 30 | 9,4 |
| 17 | 6,4 | 31 | 9,6 |
| 18 | 6,7 | 32 | 9,8 |
| 19 | 6,9 | 33 | 10,0 |
| 20 | 7,2 | 34 | 10,2 |
| 21 | 7,4 | 35 | 10,4 |
| 22 | 7,6 | 36 | 10,6 |
| 23 | 7,9 | 37 | 10,8 |
| 24 | 8,1 | 38 | 11,0 |
| 25 | 8,3 | 39 | 11,2 |
| 26 | 8,5 | 40 | 11,4 |
| 27 | 8,8 | 41 | 11,5 |
| 28 | 9,0 | 42 | 11,8 |

Այս տախտակը կազմելիս նկատի չի առնված կենսապահ կերի քանակի փոփոխությունը համեմատած կենդանի քաշի և մարմնի մակերեվույթի մեծության հետ։

## 10. ՎՈՐՈՇ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԿԱԹ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՎՈՐՔԱ՛Ն ԿԵՐ Ե ՀԱՐԿԱՎՈՐ ՏԱԼ ՏԱՎԱՐԻ՛Ն

Բացի այն կերից, վոր տրվում ե կովին իր կյանքը պահպանելու և իր պտուղը կերակրելու համար, պետք ե նրան տալ նայեվ վորոշ քանակությամբ կեր՝ կաթ պատրաստելու համար։

Կերի այն քանակը, վոր կովը գործադրում ե կաթ պատրաստելու համար, կոչվում ե արտադրող կամ արդյունաբեր կեր։

Արդյունաբեր կերի քանակը վորոշվում ե համեմատած կովի տված կաթի քանակի հետ։ Վորքան կովը շատ կաթ ե տալիս, այնքան ել շատ կեր պետք ե տալ նրան։

Արդյունաբեր կերը կազմում են առավելապես ուժեղ կերերից կամ արմատապտուղներից. մինչդեռ ինչպես գիտենք, կենսապահ կերը կազմվում ե գլխավորապես կոպիտ կերերից։

Պրակտիկ-տավարատերերը պարզել են, վոր կաթնատու կովը ամեն մի 3 փ. կաթ պատրաստելու համար պահանջում ե 1 միավոր կեր (բացի կենսապահ կերից)։ Այսպես, յեթե կովը տալիս ե 24 փ. կաթ, ուրեմն նա այդ քանակությամբ կաթ պատրաստելու համար պահանջում ե (24:3)=8 կերի միավոր։

Բայց ամեն մի միավոր կերին3 փ. կաթ տալիս ե միայն լավ կաթնատու կովը. միջակ-կաթնատու կովը 1 միավոր կերից տալիս ե միայն 2 $^1/_2$ փ. կաթ։ Միջակից ցածր կաթնատու կովերը 1 միավոր կերից տալիս են միայն 2 փ. կաթ։

Բացի կենսապահ կերից մի միայն կաթ արտադրելու համար կովին տրվող կերի (այսինքն արդյունաբեր կերի) չափը վորոշելիս մենք պետք է լավ հաշիվ տեսնենք, թե ինչ արժե մեր տված արդյունաբեր կերը, և ինչ արժե դրա դիմաց կովի տված կաթը: Միայն մոտավոր հաշվով կարելի յե ասել, թե ինչքան արդյունաբեր կեր պետք է տանք կովին վորոշ քանակության կաթ ստանալու համար. դրա պատճառները շատ են և դրանց մասին առաջուց խոսել ենք: Ինչպես ասացինք, լավ կաթնատու կովը կարող է տալ մոտավոր հաշվով ամեն մի կերի միավորի դիմաց 3 ֆ. կաթ: Բայց դա էլ մի վորոշ սահման ունի. փորձված է, վոր լավ կաթնատու կովը այդ հաշվով հեշտությամբ կաթ կտա, որինակ մինչև 36 ֆ. այս քանակից ավելի կաթ կտա միայն վորոշ լարումով, որինակ 36 ֆ-ից ավելի կաթ կտա վոչ թե 1 կերի միավորից 3 ֆ. այլ կարող է պատահել 2 ֆ: Յեթե ելի ավելացնենք հեշտ մարսվող կերեր, շատ դեպքերում զուցե հաջողվի կերն ավելի բարձրացնել, բայց արդեն այս անգամ մեկ կերի միավորից կստանանք 1 1/2 ֆ. կաթ: Իսկ յեթե ելի շարունակենք ավելացնել կերը, կհասնենք այնտեղ, յերբ կիթն այլևս չի ավելանում:

Այդ առթիվ մենք կարող ենք մեջ բերել հետևյալ մոտավոր թվերը աղյուսակի մեջ: Յեթե վերցնենք շատ կաթնատու նոր ծնած կով և նրա կերի վրա ավելացնենք հեշտ մարսվող կեր, ապա այս մոտավոր թվերից կտեսնենք, թե ինչ ազդեցություն է թողել ավելացրած կերը կիթը բարձրացնելու վրա.

| | ՖՈՒՆՏԵՐ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Բացի կենսապահ կերից ավելացրած է ուժեղ կեր կամ կերի միավորներ . . . . | 6 | 9 | 12 | 15 | 18 | 20 |
| Ստացված է կաթ . . . . . | 24 | 32 | 38 | 45 | 48 | 50 |
| Մեկ կերի միավորից ստացված է կաթ . . . . . . | 4 | 3 1/2 | 3 1/6 | 3 | 2 2/3 | 2 1/2 |

Վորքան էլ կերն ավելացնենք, կիթը 50-60 ֆնտից ավելի չի կարելի բարձրացնել. որական մինչև 60 ֆ. կիթ կարելի յե ստանալ համեմատաբար քիչ դեպքերում, այն էլ շատ կաթնատու կովերից (հոլլանդական)։

Տավարատիրոջ գործն է արդեն հաշվել, թե վո՞րքան կարելի յե բարձրացնել արդյունաբեր կերի քանակը, վոր կերակրելը կաթի ու կերի գների համեմատ ձեռնտու լինի։

Յեթե կովը կերակրվում է միայն խոտով և ուժեղ կերով, այն ժամանակ կարելի յե ղեկավարվել հետևյալ մոտավոր պարզ հաշվով, այն է՝ ամեն մի փութ կենդանի քաշին տալ 1 ֆ. լավ խոտ, և բացի դրանից ամեն մի 3 ֆ. կաթին տալ 1 ֆ. ուժեղ կեր։

Պրակտիկ-տավարատերերը տավարի մոտավոր կերաբաժինը վորոշում են հետևյալ ձևով.—սկզբում իմանում են տավարի կենդանի քաշը և համապատասխան քաշին վորոշում են կենսապահ կերի չափը. այդ կերը կազմում են տնտեսության մեջ գտնվող կոպիտ կերերից։ Որինակի համար 27 ֆ. կենդանի քաշ ունեցող և որական 30 ֆ. կաթ տվող կովի կենսապահ կերի քանակը պետք է լինի 9 միավոր. այդ 9 միավորը կազմում են ձեռքի տակ յեղող կոպիտ կերերից. որինակ առվույտից, խոտից, դարմանից և այլն, այնպես վոր մոտավորապես ամեն մի փութ կենդանի քաշին ընկնում է 1 ֆունտ կոպիտ կեր։ Այս դեպքում կոպիտ կեր պետք է վերցնել 27 ֆ։ Այս քանակությամբ կոպիտ կերը 3 նվագում են տալիս տավարին. այդ 9 միավորը բաժանում են տնտեսության մեջ գտնվող 3 տեսակի կոպիտ կերերի վրա՝ համապատասխան նրանց պաշարին, այսինքն խնայելով այն կերը, վորից քիչ կա և վորը թանկ արժե։ Այս դեպքում խնայելով առվույտը վերցնենք նրանից 2 միավոր, այսինքն 5 ֆ., ապա մարգագետնի խոտ 6 միավոր, այսինքն 18 ֆ։ Պակասող մեկ

միավորի համար վերցնենք դարման, այսինքն 4 ֆ., ընդամենը 9 միավոր կեր։

Սովորաբար նոր կթվող կովին չի կարելի որական 4-5 ֆ. դարմանից ավելի տալ, յեթե կերաբաժինը մեծ մասամբ կոպիտ կերերից ե կազմված. բացի հիշյալ կենսապահ կերից անհրաժեշտ ե նայեվ տալ արդյունաբեր կեր։ Մեր օրինակում բերած կովին, պետք ե տանք 10 միավոր կեր, հաշվելով մոտավորապես ամեն մի 3 ֆ. կաթին մի միավոր կեր։ Մեկ միավոր կերին 3 ֆ. կաթ կարելի յե սպասել լավ կաթնատու կովից։ Պակաս կաթնատու և հին կթվող կովերը տալիս են ամեն մի կերի միավորին 2—2 1/2 ֆ. կաթ։ Այս 10 միավոր կերը կազմում են գլխավորապես ուժեղ կերից և մասամբ ել արմատապտուղներից, յեթե դրանցից կա։ Չպետք ե վերցնել միմիայն մի տեսակի ուժեղ կեր, այլ ըստ հնարավորության, մի քանի տեսակ, օրինակ թեփ, վարսակի ալյուր, քուսպ և այլն։ Յենթադրենք, թե մենք ունենք քուսպ, թեփ և վարսակի ալյուր։ Այդ դեպքում ցանկալի յե հիշյալ 10 միավոր կերը կազմել հետեվյալ կերից՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 ֆ. | քուսպ | =4 | կերի | միավ. |
| 4 » | թեփ | =4 | » | » |
| 2 » | վարս. ալյուր | =2 | » | » |

Ընդամենը 10 կերի միավոր։

Անհրաժեշտության դեպքում, կարելի յե վերցնել ուժեղ կերեր և ուրիշ հարաբերությամբ, բայց միայն աչքի առաջ պետք ե ունենալ, որ կերի միավորների թիվը չըփոխվի։

Օրինակ՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 1/2 ֆ. | քուսպ | = 2 | կերի | միավ. |
| 4 » | թեփ | = 4 | » | » |
| 4 » | վարս. ալյուր | = 4 | » | » |

Ընդամենը 10 » »

Յեթե արմատապտուղ կա, շատ ցանկալի յե արդյունաբեր կերի միավորների մոտավորապես կեսը փոխարինել արմատապտուղներով։

Որինակ, յեթե ունենք ճակնդեղ, (տակ) կարելի յե 5 կերի միավորը փոխարինել նրանով, այն ժամանակ արդյունաբեր կերը կազմված կլինի 5 ֆ. ուժեղ կերից և 50 ֆ. ճակնդեղից։

Մեր հիշած կովի համար, վորի կենդանի քաշն եր 27 փ. և որական կիթը 30 ֆ. կերի միավորների ընդհանուր գումարն ե 19։ Այդ 19 միավոր կերը մենք վերցրինք զանազան կերերից և ստացանք զանազան կերաբաժիններ՝ համապատասխան մեր տրամադրության տակ գտնվող կերերի և նրանց գների։ Հետեվաբար նման հարցերը կարելի յե լուծել զանազան ձեվով, բայց համենայն դեպս չպետք ե փոփոխել, այսինքն չպետք ե վոչ ավելացնել և վոչ ել պակասացնել անհրաժեշտ կերի միավորների թիվը, խստությամբ հետեվելով այն կանոններին, վոր վերաբերում են կոպիտ և ուժեղ կերի և արմատապտուղների քանակին։

Վերջնականապես ամբողջ որաբաժինը այսպես կազմվեց՝ (վերցրած ե որինակներից մեկնումեկը).

| | | | | |
|---|---|---|---|---|
| Առվույտ . . . . . . . . | 5 ֆ. | = | 2 | կեր. միավ. |
| Խոտ-մարգագետնի . . . . | 18 » | = | 6 | » » |
| Դարման . . . . . . . . | 4 » | = | 1 | » » |
| Քուսպ . . . . . . . . | 3 » | = | 4 | » » |
| Թեփ . . . . . . . . . | 4 » | = | 4 | » » |
| Վարսակի ալյուր . . . . | 2 » | = | 2 | » » |
| Ընդամենը . . . . . | | | 19 | կերի միավ. |

Այդ նույն կովի համար կերաբաժին կարելի յե կազմել և ուրիշ կերից։ Որինակ 4 ֆ. թեփը մենք կարող ենք փոխարինել 1 փութ ճակնդեղով, կամ թե 4 ֆ. դարման՝ 1 ֆ. քուսպով։ Յեթե ընդհանրապես կերաբա-

ժինը ճիշտ է կազմված, այդ փոխարինումներից կաթի քանակը նկատելի չափով չպետք է փոխվի։

## 11. ԿԵՐԱԲԱԺԻՆ ԿԱԶՄԵԼՈՒ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ամեն անգամ կերաբաժին կազմելիս պետք է աշխատենք, որ նա 1) պարունակի բավարար քանակությամբ կերի միավորներ, 2) լինի որքան կարելի յե բազմազանեւակ և համեղ տավարի համար, 3) հեշտ մարսվի և շատ չծանրաբեռնի տավարի ստամոքսը և 4) լինի հնարավոր չափով եժան։

Առանձին կերերի արժեքը որոշելու համար հաշվում ենք՝ ինչ է նստում մեր վրա ամեն մի առանձին կերի միավորը շուկայի գներով։ Օրինակ 1 փ. խոտը արժե 26 կոպ. *) իսկ մեկ փութ խոտի մեջ կա 13 միավոր կեր. հետեվաբար խոտի մեկ միավորը արժե 2 կոպ. 1 փութ ճակնդեղը արժե 4 կոպ. իսկ 1 փութ ճակնդեղի մեջ կա 4 միավոր կեր, հետեվաբար մեկ միավր ճակընդեղը արժե 1 կոպ. այսինք 2 անգամ ավելի եժան, քան խոտը։ Հետևվաբար, յեթե մենք ունենք բավարար քանակությամբ ճակնդեղ, կերաբաժին կազմելիս պետք է աշխատենք որքան կարելի յե շատ միավորներ գցել ճակընդեղի վրա, բայց ի հարկե առանց չափն անցկացնելու։

Որքան կարելի յե, պետք է աշխատել կերաբաժինը կազմել հատկապես այն կերից, որոնց կերի մի միավորը ամենից եժան է նստում։ Այս հաշվով կերաբաժին կազմելիս ոչ միայն կաթ շատ կը ստանանք, այլեվ կաթը մեր վրա ավելի եժան կնստի։

Որպես օրինակ վերցնենք 2 բնորոշ դեպք. առաջին դեպքում կոպիտ կերի 1 միավորը 2 անգամ ավելի թանկ է, քան ուժեղ կերինը. յերկրորդ դեպքում ընդհա-

*) Մինչ-պատերազմյան գներով

կաուակը կոպիտ կերի միավորը 2 անգամ եժան ե ուժեղ կերի միավորից։

Յենթադրենք, թե միեվնույն կովի համար մենք ուզում ենք վերոհիշյալ կերից կազմել կերաբաժին համապատասխան Նրանց գների։ Դիցուք թե ունենք մի կով, վոր ունի 24 փութ կենդանի քաշ և տալիս ե օրական 36 ֆ. կաթ. հետեվաբար այդ կովին պետք ե տալ ընդամենը (8+12)=20 միավոր կեր։

| Կերերի անունները | Մեկ փութ կերի արժեք | Քանի կերի միավոր կա 1 փթի մեջ | Մեկ կերի միավորի արժեքը |
| --- | --- | --- | --- |
| | **Առաջին դեպքում** | | |
| Խոտ մարգագետնի. . . . | 52 կոպ | 13 | 4 կոպ. |
| Ցերենի թեփ. . . . . . . | 80 » | 40 | 2 » |
| Կտավատի քուսպ . . . . | 106 » | 53 | 2 » |
| | **Յերկրորդ դեպքում** | | |
| Խոտ մարգագետնի. . . . | 26 կ. | 13 | 2 կ. |
| Ցորենի թեփ. . . . . . . | 160 կ. | 40 | 4 կ. |
| Կտավատի քուսպ . . . . | 212 կ. | 53 | 4 կ. |

Առաջին դեպքում, յերբ կոպիտ կերի միավորը 2 անգամ թանկ ե, պետք ե վերցնել կոպիտ կերից այն անհրաժեշտ քանակը, վորից պակաս չի կարելի տալ. իսկ դրա փոխարեն մնացած կերի միավորները լրացնել ուժեղ կերերով։ Խոտի ամենափոքր քանակը, վոր անհրաժեշտ ե տալ կովին, այդ 15 ֆունտն ե = 5 միավոր կերի։ Պակասում ե 15 միավոր. յեթե այդ կերին ավելացնենք ել 4 ֆ. կտավատի քուսպ և 10 ֆ. թեփ, կստանանք պակասող 15 միավոր կերը։

Հետեվաբար հիշյալ կովի կերաբաժինը առաջին դեպքում կլինի՝

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 15 ֆ. խոտ . . . . . | = 5 | կերի | միավ. | և արժե | 20 | կ. |
| 10 » Թեփ . . . . . | = 10 | » | » | » | 20 | » |
| 4 » կտավատի քուսպ | = 5 | » | » | » | 20 | » |
| | | | | | | |
| Ընդամենը | 20 | կերի | միավոր | արժե | 60 | կ. |

Յերկրորդ դեպքում, յերբ կոպիտ կերի միավորը եժան ե, իսկ ուժեղ կերի միավորը Թանկ, պետք ե վերցնել կոպիտ կեր վորքան կարելի յե շատ։ Հիշյալ կովի համար պետք ե վերցնել 30 ֆ. խոտ = 10 միավորի։ Պակասում ե ելի 10 միավոր. այդ 10 միավորն ել կըվերցնենք ուժեղ կերերից, այն ե 4 ֆ. կտավատի քուսպ և 5 ֆ. ցորենի Թեփ։ Այսպիսով կստանանք հետեվյալ կերաբաժինը.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 30 ֆ. խոտ . . . . | = 10 | կերի | միավ. | և արժե | 20 | կ. |
| 5 » ցորենի Թեփ . | = 5 | » | » | » | 20 | » |
| 4 » կտավատի քուսպ | = 5 | » | » | » | 20 | » |
| | | | | | | |
| Ընդամենը | 20 | կերի | միավ. | արժե | 60 | կ. |

Տեսնենք, Թե ինչքան կնստեր մեզ վրա միեվնույն կովի կերաբաժինը, յեԹե մենք փոխված գների հետ կոպիտ կերի քանակը չփոխեյինք։

Դրա համար առաջին կերաբաժինը Թողնենք անփոփոխ և միայն բերենք յերկրորդ դեպքում յեղած գները, ուրիշ խոսքով Թեպետ գները փոփոխվում են, մենք կերի քանակը չենք փոխում։

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 15 ֆ. խոտ | = 5 | կերի | միավորի— | արժե | 10 | կ. |
| 10 » Թեփ | = 10 | » | » | » | 40 | » |
| 4 » քուսպ | = 5 | » | » | » | 20 | » |
| | | | | | | |
| Ընդամենը | 20 | կերի | միավոր | արժե | 70 | կ. |

Հետեվաբար, յեԹե մենք կերի մեջ փոփոխուԹյուն կատարենք համապատասխան նրանց փոխված գների, մենք հնարավորուԹյուն կունենանք կերաբաժինը եժանացնել 10-20 կոպեկով։

Կերաբաժին կազմելու ժամանակ, ինչպես արդեն

ասված է, մենք պետք է իմանանք, բացի կենդանի քաշից ու կիթից, նայեվ կովի չաղության աստիճանը, գոմի տաքությունը և մեր կերերի վորակը։ 10° տաքությունից ցած ամեն մի աստիճան կպահանջի վորոշ քանակությամբ ավելորդ կեր։ Լղարած կովը հակառակ նորմայի կպահանջի 2-3 ֆ. ավելորդ ուժեղ կեր, իսկ չաղ կովն ընդհակառակը՝ 1-2 ֆ. պակաս։

Վատ ճահճային խոտի վոչ թե 3 ֆ.-ը, այլ 4 կամ նույնիսկ 5 ֆունտն է հավասարվում 1 կերի միավորի. յեթե մենք առանց ուշադրություն դարձնելու այդպիսի խոտը համարենք միջակ արժանիքի կեր (այսինքն 3 ֆ. =1 միավորի), այն ժամանակ կերաբաժինը սխալ կըկազմըվի։

Ընդհանրապես վոչ մի ժամանակ չպետք է կազմել կերաբաժին, առանց նախապես տավարին տեսնելու, առանց գոմի տաքությունն իմանալու և կերերը տեսնելու։

Այսպես ուրեմն, կերաբաժին կազմել նշանակում է նախ վորոշել այն կերի միավորների թիվը, վոր պահանջում է կովը որական՝ համապատասխան իր կենդանի քաշին ու կիթին, ապա այդ կերի միավորները բաժանել տնտեսության մեջ գտնվող զանազան կերերի վրա։ Առ այդ, նորից հիշեցնում ենք, վոր չի կարելի պահանջվող կերի բոլոր միավորը կազմել միայն մի տեսակի կերից, որինակ միմիայն դարմանից կամ ուժեղ կերից կամ արմատապտուղներից, վորովհետեվ դա վատ է ազդում տավարի առողջության վրա և վնաս է տավարատիրոջ համար։

Կաթնատու տավարի կերաբաժին կազմելու ընդհանուր կանոնն այս է.—մենք պետք է աշխատենք այնպես կազմել կերաբաժինը, վոր նրա մեջ մանեն վորքան կարելի յե շատ զանազան տեսակի կերեր, վոր նրա մեջ լինի դարման, արմատապտուղ և պալարապտուղ, խոտ և

ուժեղ կերեր, այն է՝ ալյուրի թեփ, վարսակի ալյուր և քուսպ։

Բայց քիչ դեպքերում են այդ բոլոր կերերը լինում մեր տնտեսության մեջ։ Մեծ մասամբ ստիպված ենք կերաբաժինը կազմել 3-4 տեսակի կերից։ Ամեն մի կովի համար կարելի յե կերաբաժին կազմել, յեթե կա թեկուզ հենց խոտ, դարման և թեփ կամ վարսակի ալյուր։ Բայց միմիայն խոտ ու դարմանից չի կարելի ճիշտ կերաբաժին կազմել լավ կաթնատու կովի համար այլ անհրաժեշտ է նայեվ ուժեղ կեր։

Յուրաքանչյուր կերաբաժնին անհրաժեշտ է ավելացնել գոնե քիչ քանակությամբ դարման, մանավանդ յերբ տավարին առատ արմատապտուղ է տրվում, վորովհետեվ դարմանը վորպես կոպիտ կեր նպաստում է մեծ քանակությամբ ստամոքսի հյութ առաջանալուն, վորով և հեշտացվում է կերի մարսվելը։ Յեթե մեր կազմած կերաբաժնի մեջ կոպիտ կերը 15 ֆնտից պակաս է, այն ժամանակ (յեթե արմատապտուղն էլ քիչ է) կովն իրեն կուշտ չի զգա, թեկուզ և կերաբաժնի մեջ ըստ հաշվի բավարար սննդարար նյութեր լինեն։ Վորպեսզի կովը իրեն կուշտ զգա, պետք է կերաբաժնի մեջ լինի հայտնի քանակությամբ կոպիտ կեր։ Բայց դե էլի չի կարելի տալ չափից դուրս կոպիտ կեր, վորովհետեվ այդ դեպքում կովի ստամոքսը շատ կը լցվի և կդադարի աշխատել։ Բացի դրանից, յեթե կոպիտ կերը վատ խոտ կամ դարման է, կովն այդպիսի կերից շատ չի ուտի, ինչքան էլ վոր առաջը լցնես։

Ընդհանրապես պարզել են, վոր կերաբաժինը լավ է ոգտագործվում այն ժամանակ, յերբ նրա մեջ մտնող կոպիտ կերն ու ուժեղ կերը կամ արմատապտուղները վորոշ կապակցության մեջ են իրար հետ քանակի և վորակի տեսակետից։

Պրակտիկ տավարատերերը հաշվում են, վոր որական

կերաբաժնի մեջ կոպիտ կերի քանակը չպետք ե լինի ավելի 32-36 ֆնտից, արմատապտուղների քանակը վոչ ավել 80-100 ֆ.-ից, իսկ խտացրած ուժեղ կերի քանակը վոչ ավել 15 ֆնտից. բայց չի կարելի նայեվ տալ 15 ֆընտից պակաս կոպիտ կեր և 2 ֆնտից պակաս ուժեղ կեր։

Յեթե կոպիտ կերի մեջ լավ խոտ կամ առվույտ շատ ե մտնում, այն ժամանակ հիշյալ 2 ֆ. ուժեղ կերը ցամաքած կամ հին ծնած, մոզամեր կովերին կարելի յե և չտալ։ Իսկ յեթե կերաբաժնի մեջ արմատապտուղ շատ ե մտնում, այն ժամանակ կոպիտ կերի քանակը կարելի յե պակասեցնել մինչեվ 10 ֆ. որական ամեն մի կովին։ Այն դեպքերում, յերբ տնտեսության մեջ կոպիտ կեր շատ կա և եժան ե, այլ և յեթե կոպիտ կերը վատն ե, կարելի յե նրանից տալ տավարին որական 35 ֆնտից ավելի, վորովհետեվ այդ դեպքում տավարը կերի միջից կջոկի լավ մասը և կուտի, իսկ վատը կթողնի։

Չի կարելի կերաբաժնի մեջ մտնող ուժեղ կերն ամբողջովին մեկ տեսակի կերից վերցնել, այլ պետք ե կազմել խառնուրդ թեփից, քուսպից և ալյուրից (վարսակի կամ յեգիպտացորենի) մոտավորապես հավասար քանակություններով։ Այսպես, յեթե պետք ե որական տալ 12 ֆ. ուժեղ կեր, ցանկալի յե վերցնել 4 ֆ. թեփ, 4 ֆ. վարսակի ալյուր (կամ յեգիպտացորենի) և 4 ֆ. արեվածաղկի կամ կտավատի քուսպ։ Այսպիսի խառնուրդով (12 ֆ.) կերակրելիս ավելի շատ կաթ կստանանք, քան յեթե միայն ամբողջովին 12 ֆ. թեփով կերակրեյինք։

Յերբ ցանկանում են վորոշել կթին համապատասխան անհրաժեշտ արդյունաբեր կերի քանակը, ղեկավարվում են հետեվյալ կանոններով։

Լավ կաթնատու կովին կթվելու ժամանակաշրջանի առաջին կեսին անհրաժեշտ ե տալ առավելապես ուժեղ կերերից կամ արմատապտուղներից կազմված կերաբաժին-նոր ծնած կովի կերաբաժնի մեջ դարմանի և խոտի քա-

նակը միավորների կեսից ավելի չպետք է լինի։

Յեթե կոպիտ կերի մեջ մի միավորն ավելի եժան է նստում, քան ուժեղ կերի մեջ, այն ժամանակ կթվելու ժամանակաշրջանի յերկրորդ կեսից հարկավոր է կամաց-կամաց պակասեցնել ուժեղ կերի և թե արմատապտուղների քանակը և դրանց փոխարինել խոտով ու դարմանով։

Ցամաքած կովի կերաբաժինը պետք է կազմվի գլխավորապես խոտից կամ դարմանից և աննշան քանակությամբ ուժեղ կերերից։

Յուրաքանչյուր կովին ծնելուց հետո, քանի դեռ չի կազդուրվել, մոտավորապես 6 օր կերակրում են թեթև, բայց սննդարար կերերով։ Հենց վոր կատարելապես կազդուրվեց, կապում են այն կովերի շարքում, վորոնք ստանում են ամենալավ կերը, և թողնում են այդտեղ 10-15 օր (կաթի քանակի վրա ուշադրություն չեն դարձնում)։ Այդ ժամանակվա ընթացքում կովը կարծես թե փորձվում է, թե ինչքան կաթ կարող է տալ։ 10-15 օր հետո կերաբաժինը վերածում են կերի միավորների և հաշվում։ Յեթե կովը տալիս է ամեն մի կերի միավորի դիմաց 3 ֆունտից պակաս կաթ, այն ժամանակ նրան փոխադրում են իր կերին համապատասխան կեր ստացողների շարքը։

Յեթե պետք է լինում կերաբաժին կազմել այնպիսի կովերի համար, վորոնց կերն ոգտագործելու ընդունակությունը մեզ անհայտ է, այն ժամանակ կիթին և կենդանի քաշին համապատասխան կերաբաժին կազմելուց հետո, ավելացնում ենք նորմայից դուրս որական յերեքական ֆ. ուժեղ կեր ամեն մեկին։ Այդ այսպես կոչված փորձնական կերաբաժինը մնում է 10-15 օր, վորից հետո նայած թե վորքան է ավելացել կամ պակասել կիթը, սահմանում են ճիշտ կերաբաժին՝ համապատասխան կենդանի քաշին և որական կիթին։

## 12. ՆՈՐՄԱՆԵՐՈՎ ԿԵՐԲԱԺԻՆՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Դիցուք թե մենք ունենք 3 կով. մեկը ցամաքած է և ունի 30 փ. կենդանի քաշ. յերկրորդը՝ հին ծնած է, ունի 21 փ. կենդանի քաշ և որական տալիս է 15 ֆ. կաթ. յերրորդը նոր ծնած է, կենդանի քաշը 27 փ. և որական կիթը 27 ֆ. է։ Նոր ծնած կովը դեռ բուղի չի յեկել, իսկ մյուս յերկուսը յեկել են։ Մեր տրամադրության տակ կան հետեվյալ կերերը՝ խոտ, առվույտ, դարման, կտավատի քուսպ, ցորենի թեփ և ճակնդեղ։ Յենթադրենք, թե խոտն ու դարմանը բավարար քանակությամբ են, իսկ մնացած կերերը քիչ են, ուստի և կերաբաժնի մեջ պետք է մտնեն վորքան կարելի յե մեծ քանակությամբ խոտ ու դարման։

Կասկած չկա, վոր մենք այդ 3 կովերին չենք կերակրի միատեսակ, այլ նախ կիմանանք, թե ամեն մի կովը քանի միավոր կեր պիտի ստանա համաձայն իր կենդանի քաշին և որական կիթին, ապա ամեն մի կովին հասնող կերի միավորները կկազմենք մեր տրամադրության տակ գտնվող կերերից։ Միաժամանակ կաշխատենք խնայողություն կատարել այն կերերի նկատմամբ, վորոնցից քիչ ունենք և վորոնք թանկ են։

Ցամաքած կովի կենդանի քաշը 30 փութ է. հետեվաբար նա, ինչպես խոշոր կով, պետք է ստանա իր կյանքը պահպանելու համար որական 10 միավոր կեր և բացի դրանից փորի հորթի համար՝ ելի 1 կերի միավոր։ Ուրեմն մեր ցամաքած կովը ամբողջ որվա համար պետք է ստանա 11 միավոր կեր։

Յերկրորդ, հին ծնած կովը իր 27 փութ կենդանի քաշի դիմաց պետք է ստանա որական 7 միավոր կեր. բայց վորովհետեվ նա ծանրած է, ուրեմն պետք է ավելացնել ելի 1 միավոր կեր փորի հորթի սնուցման համար.

բացի դրանից այդ կովը տալիս է օրական 15 ֆ. կաթ, որի համար նա պահանջում է 5 միավոր կեր։ Հետեվաբար հին ծնած կովը պահանջում է օրական 15 միավ. կեր. Նոր ծնած կովը համաձայն իր 27 փ. կենդանի քաշին պետք է ստանա 9 միավոր պահպանող կեր., իսկ 27 ֆ. կաթ կազմելու համար ելի 9 միավոր։ Հետեվաբար Նոր ծնած կովին անհրաժեշտ է օրական 18 միավոր կեր։

Իմանալով ամեն մի կովի կերի միավորների քանակը՝ մենք սկսում ենք ամեն մի կովի համար առանձին կերաբաժին կազմել մեր ունեցած կերերից այնպես, որ վերցրած կերերն ընդհանուր առմամբ պարունակեն կերի միավորների այն քանակը, որ մենք դուրս բերինք կովերի համար։ Այդ անում են հասարակ ձեվով. Նորմաները փոփոխում են այնքան ժամանակ, մինչեվ որ վերցրած կերերի մեջ գտնում են կերի միավորների ցանկալի քանակությունը։

Բաշխելով կերերը և հաշվելով կերի միավորները, մենք կգտնենք ամեն մի առանձին կովի կերի Նորման։

Վերեվում բերած 3 կովերի կերակրմանը վերաբերող տվյալները հարմարության համար ի մի յեն հավաքված և արտահայտված են այս տախտակի ձեվով՝

| Կ Ո Վ Ե Ր Ը | Կենդանի քաշը ֆունտ | Օրական կաթը ֆունտերով | Կենդանաքաշին կերի միավ. թիվը | Արդյունավետ կերի միավ. թ. | Ընդամենը կերի միավորներ թ. ու. | Ֆ ու ն տ ե ր: Դարման | Խոտ | Առվույտ | Թեփ | Կարտոֆ. | Քուսպ | Ճակնդեղ | Ընդամենը կերի միավորներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Յամաքածը . | 30 | — | 11 | — | 11 | 16 | 12 | — | 2 | — | 1 | — | 11 |
| Հին կթվողը . | 21 | 15 | 8 | 5 | 13 | 8 | 9 | 5 | 2 | 2 | 2 | — | 13 |
| Նոր ծնածը . | 27 | 17 | 9 | 9 | 18 | 8 | 9 | 10 | 2 | 2 | 2 | 30 | 18 |

Հասկանալի յե, վոր այս նորմաները միշտ ճիշտ չեն. նրանց պետք ե ամեն անգամ վորոշ փոփոխության յենթարկել համաձայն տեղական տավարին ու կերերին։

Կարելի յե, ինարկե, կերաբաժին կազմել և ուրիշ կերերից։

Յեթե որինակ մենք չունենայինք ճակնդեղ, մենք նրան կարող կլինեյինք փոխարինել 3 ֆ. վարսակի ալյուրով (30 ֆ. ճակնդեղը իր սննդով համասար ե մոտավորապես 3 ֆ. վարսակի ալյուրի)։ Կամ յեթե մենք չունենայինք վորսակի ալյուր, մենք նրան կփոխարինեյինք 2 ֆ. թեփով։ Այսպիսի փոխարինումներից կովի կիթը շատ քիչ ե փոխվում։

Մի խոսքով, իմանալով առանձին կերերի սննդարարությունը, մենք կարող ենք կերաբաժնի մեջ վորոշ քանակությամբ և վորոշ սահմաններում մեկը մյուսով փոխարինել։ Յեթե այս դեպքում կպահվեն այն կանոնները, վորոնց մեջ ցույց են տրված կերաբաժնի մեջ մտնող կոպիտ և ուժեղ կերերի ամենաբարձր և ամենացածր քանակությունները, ապա այս ձևով մի կերը մյուսով փոխարինելիս կիթը նկատելի չափով չի պակասի։ Միայն անհրաժեշտ ե հետևվել, վոր այդ փոխարինումների ժամանակ կերի միավորների ընդհանուր գումարը չփոխվի։

Մի ուրիշ որինակ.

Կովի կենդանի քաշը 25 փութ ե, իսկ որական կիթը 30 ֆ. ունենք՝ խոտ, դարման, վարսակի ալյուր, ճակընդեղ, վարսակի դարման, ցորենի թեփ և արեվածաղկի քուսպ։

Կովն որական պետք ե ստանա՝

| | | |
|---|---|---|
| Կենսապահ կեր | . . . . . | 8 միավ. |
| Արդյունատբեր » | . . . . . | 10 » |
| | Ընդամենը | 18 միավոր կեր. |

Կենսապահ կերը համարյա ամբողջովին վերցնում են կոպիտ կերերից, այն ե՝

15 ֆ. խոտ. = . . . . 5 կ. միավ.
10 ֆ. վարսակի դարման . $2^1/_2$ » »

Արդյունաբեր կերը վերցնում ենք հեշտ մարսվող և յուրացվող կերերից, այն է՝

25 ֆ. ճակնդեղ . . . . . $2^1/_2$ կ. միավ.
2 » վարսակի ալյուր . . 2 » »
2 » ցորենի թեփ . . . 2 » »
3 » արեվածաղկի քուսպ . 4 » »

Ընդամենը . . $10^1/_2$ կ. միավ.

Յեթե կովը հղի չէ, պետք է ավելացնել յեվս մեկ ֆ. ուժեղ կեր։

Բայց մենք պետք է ընդգծենք, որ բոլոր մեջ բերած նորմաները միայն միջին թվեր են։ Յեթե կաթը թանկ է ծախվում, իսկ կերերը եժան են, անհրաժեշտ է կերաբաժինը միջին նորմայից ավելի բարձրացնել։ Յեթե կաթի գինը միջակ է, պետք է պահել կերաբաժնի միջին նորման, իսկ յեթե կաթը եժան է, պետք է տավարը կերակրել միջակից մի քիչ ավելի պակաս նորմաներով։ Օրինակ, յերբ կաթը թանկ է և կերը համեմատաբար եժան, պետք է մեծացնել արդյունաբեր կերի քանակը՝ հաշվելով ամեն մի 2—$2^1/_2$ ֆ. կաթին 1 միավոր կեր։

## 13. ՏԱՎԱՐԻՆ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Կերաբաժինը կազմելուց հետո մենք պետք է որոշենք թե նախ՝ քանի անգամ պետք է կերակրենք տավարին, յերկրորդ՝ կերակրելու ժամերը և յերրորդ՝ առանձին կերերը տալու կարգը։

Միաժամանակ պետք է հիշենք, որ 1) կովին պատահած ամեն մի անհանգստություն վատ է անդրադառնում կթի վրա. 2) ժամանակին չկերակրված կովը պահում է կաթը և 3) կաթնատու կովը ընդունած կերը ծամելու-որոճալու համար պահանջում է յերկար ժամանակ և յեթե նրան շուտ-շուտ մանր բաժիններով կերակրենք,

նա ժամանակ չի ունենա կերը լավ ծամելու-մանրացնելու, ուստի և կերը լավ չի օգտագործվի, քան յեթե կերը ուշ-ուշ և խոշոր բաժիններով տանք։ Այդ նրանից է, վոր կովի ստամոքսն առանձին կազմություն ունի։ Ուստի մենք պետք է աշխատենք վորքան կարելի յե քիչ անհանգստացնենք մեր տավարը և ճիշտ վորոշված ժամերին կերակրենք, մաքրենք և կթենք։

Այն տնտեսություններում, վորտեղ տավարը բացառապես կոպիտ կերերով է կերակրվում, խորհուրդ ենք տալիս որական 3 անգամ կերակրել տավարին. իսկ այն տնտեսություններում, վորտեղ տավարը կերակրվում է բազմազան և ուժեղ կերերով, լավ է և ձեռնտու, տավարին կերակրել միայն յերկու անգամ, վորովհետև կերերի ընդհանուր ծավալն այնքան մեծ չի, վորքան առատ խոտ ու դարման տալու ժամանակ։ Բացի այդ բազմազան կերը գրգռում է տավարի ախորժակը, ուժեղացնում է թուքի և ստամոքսի հյութերի արտադրությունը, արագ և հաճույքով է ուտվում։ Այդ պատճառով, յեթե կերերը տալու կարգը ճիշտ է վորոշված, ապա որական 2 անգամ կերակրելիս կերերը ավելի լավ են օգտագործվում, քան յերեք անգամ կերակրելիս։ Իսկ յեթե ունենք բազմազան կեր և փոխանակ 2 անգամ կերակրելու յերեք անգամ ենք կերակրում, այդ դեպքում մենք իզուր տեղն ավելորդ անգամ անհանգստացնում ենք տավարին. իսկ ամեն մի ավելորդ անհանգստություն վատ է անդրադառնում կթի վրա։ Ահա թե ինչու Դանիայում սովորաբար տավարին կերակրում են որական 2 անգամ։

Յեթե տավարին կերակրում ենք 3 անգամ, այդ դեպքում կեր տալու ամենալավ ժամերն են՝ առավոտյան 5—7-ը, ցերեկվա 12-2 և յերեկոյան 6—8-ը։

Իսկ յեթե տավարին կերակրում եք որական 2 անգամ, այդ դեպքում կեր տալու ամենալավ ժամանակը առավոտյան ժ. 5--7-ն է, և յերեկոյան ժ. 5—7-ը։

Տավարին որական 2 անգամ կեր տալու սովորությունը կա վոչ միայն Դանիայում, այլ և Արևմտյան Ռուսաստանում և մեծ հաջողություն ունի։

Տավարին որական 3 անգամ կեր տալիս կերերը (արմատապտուղներ, խոտ և դարման) բաժանում են 3 մասի, մի մասը տրվում ե առավոտյան, մյուսը՝ կեսորին, իսկ մնացածը՝ յերեկոյան։

Կերը տալու կարգը այսպես ե.—սկզբում տալիս են ուժեղ կերերը, ապա արմատա-կամ պալարապտուղները, իսկ հետո կոպիտ կերերը։ Ընդհանրապես պետք ե սկսել լավ կերերից և վերջացնել վատերով։

Ուժեղ կերերը տրվում են կամ չոր դրությամբ, կամ թե մի քիչ դարմանի հետ խառնած ու ջրով թաց արած։

Վորպեսզի թուքի և ստամոքսի մարսողական հյութերի արտադրությունը ուժեղանա, պետք ե կերաբաժնի մեջ մտնող ալյուրը կամ թեփը մի լավ խառնել թրջված և աղ արած դարմանի հետ։ Դարմանը վերցնում են ծավալով հաշված, ալյուրից մոտ 2 անգամ շատ. որինակ 1 աման ալյուրին վերցնում են 2 աման դարման։

Կովի ջրի տաշտի մեջ պետք ե մշտապես մաքուր ջուր լինի, վորպեսզի կովն ուզած ժամանակը կարողանա խմել, Դանիացիք սովորություն չունեն ուժեղ կերերից ջրի հետ խաշիլ պատրաստել և տալ տավարին, վորովհետև նկատել են, վոր ջրի հետ խառնած ուժեղ կերը ավելի վատ ե ոգտագործվում, քան չոր կամ դարմանի հետ խառնած դրությամբ։ Իսկ յեթե կերաբաժնի մեջ դարման շատ ե մտնում, այն ժամանակ նրա մի մասը պետք ե թրջել աղաջրով, վրան շաղ տալ թեփ կամ ալյուր և խառնել. այդ դրությամբ կովերն ավելի ախորժակով են ուտում դարմանը։

## 14. ԻՆՉՊԵ՞Ս ԿԵՐԱԿՐԵԼ ՏԱՎԱՐԻՆ ԱՄԱՌԸ

Ինչպե՞ս իմանանք, թե ստանում է՞ արդյոք մեր տավարը արոտից բավարար քանակությամբ կեր, թե ոչ։

Փորձված տավարատերը տավարի չաղությունից և կիթից համարյա միշտ ավել կամ պակաս ճշտությամբ կըպատասխանի այս հարցին։

Յեթե տավարը լղարում է (բայց ընդհանրապես առողջ է) և արագ կերպով կիթը պակասեցնում, այդ նշանակում է, որ նա արոտից բավարար կեր չի ստանում, հետևաբար անհրաժեշտ է լրացուցիչ կեր տալ նրան։

Իբրև լրացուցիչ կեր ամենից եժան են նստում զանազան տեսակի վիկաները, կանաչ առվույտը, այգուխոտը, զանազան տեսակի բանջարանոցային բույսերի տերևներ, այսինքն ընդհանրապես կանաչ կեր։ Բայց յեթե կանաչ կերը քիչ է, այն ժամանակ անհրաժեշտ է տալ ուժեղ կեր (ալյուր, թեփ, քուսպ) մի քիչ թաց դարմանի հետ խառնած։

Լրացուցիչ կերի չափը վորոշվում է գլխավորապես համաձայն տավարի կիթին ու չաղությանը։ Վորքան կովը շատ կաթ է տալիս, կամ յեթե նա մինչ այդ վատ կերակրված լինելու պատճառով է, որ քիչ կաթ է տալիս, պետք է ավելացնել լրացուցիչ կերը։ Բայց միաժամանակ մենք պետք է հաշիվ տեսնենք, թե ինչ է նստում մեր վրա որական կերաբաժինը և ինչ արժե ստացված կաթը․ այնպես պետք է լինի, որ ստացված կաթի արժեքը ծածկի կերի ծախսը և մի բան էլ մնա։

Ամառը, արածելու ժամանակ կաթնատու տավարին տրվելիք լրացուցիչ կերի քանակը վորոշվում է դիտողությունների միջոցով։

Յենթադրենք, թե մենք ունենք մի նոր ծնած կով,

վորը տալիս է 12 ֆ. կաթ։ Յեթե կովը լղար է, բայց ընդհանրապես առողջ է, պարզ է, վոր արոտը նրան չի կշտացնում, վորպեսզի մեծ քանակությամբ կաթ տա և չլղարի։ Ուստի մենք պետք է կովին լրացուցիչ կեր տանք։ Այդ լրացուցիչ կերի քանակը վորոշվում է փորձով։ Որինակ վերոհիշյալ նոր ծնած կովին ավելացնում ենք ելի 12 կամ 15 ֆ. լրացուցիչ կեր և դիտում ենք, թե ինչքան կովը կաթն ավելացրեց այդ լրացուցիչ կերն ստանալուց հետո։ Յեթե կովն ավելացրեց ավելի պակաս կաթ, քան նրան տրված լրացուցուցիչ կերն արժեր, այն ժամանակ լրացուցիչ կերը պակսեցնում ենք։ Այս հաշիվը տեսնում են կերն ավելացնելուց հետո յուրաքանչյուր 10 որը մի անգամ։

Հուլիսին և ոգոստոսին արոտում կանաչն սկսում է պակասել և վորակով ել վատանում է։ Այդ ամիսներին արոտի կանաչը հազիվ բավականացնում է տավարի կյանքը պահպանելու և 10 ֆ. կաթ տալու համար։

Յեթե կովը որական 10 ֆնտից ավելի կաթ է տալիս, այդ դեպքում 10 ֆնտից ավելի տված ամեն մի 3 ֆ. կաթի համար նրան պետք է տալ լրացուցիչ 1 ֆ. ուժեղ կեր կամ նրան համապատասխան ուրիշ կեր։

Հուլիսին և ոգոստոսին նոր ծնած կովերին սովորաբար պետք է տալ որական 6 ֆ. լրացուցիչ ուժեղ կեր կամ 90 ֆ. կանաչ կեր։

Սեպտեմբերին, հոկտեմբերի առաջին կեսին յեթե տավարն արածում է մեր սովորական արոտներում, նա այնտեղից հազիվ իր կյանքը պահպանելու և 4-5 ֆ. կաթ տալու չափ կեր է ընդունում, այն ել վոչ միշտ։ Հետեվաբար այդ ամիսներին, նույն հաշվով, ինչ վոր անցյալ ամիսներին, մանավանդ նոր ծնած կովերին, որական պետք է տալ մոտ 8 ֆ. լրացուցիչ ուժեղ կեր։ Յեթե այդ ժամանակ նոր ծնած կովերին լավ ուժեղ կեր չտանք, նրանք կլղարեն և արագությամբ կաթը կպակսեցնեն.

իսկ ձմրանն արդեն դժվար կլինի նրանց չաղացնել ու կիթը շատացնել:

Անհնարին է տալ վորոշ ցուցմունքներ, թե ինչքան լրացուցիչ կեր է հարկավոր ամառը արոտում արածող տավարին, վորովհետեվ այդ լրացուցիչ կերի քանակը մեծ կախումն ունի արոտի մեծությունից ու արժանիքից, վորը ամեն դեպքում մեկ չի լինում: Բայց այնուամենայնիվ մեջ բերված տվյալները, ստացված լինելով գործնական դիտողությունների միջոցով, կարող են տավարատիրոջը զերծ պահել կոպիտ սխալներից՝ այդ ուղղությամբ փորձեր կատարելու ժամանակ: Իսկ ավելի ճիշտ տվյալներ ստանալու համար պետք է ամեն մի տավարատեր յուրաքանչյուր առանձին կենդանու և արոտի վերաբերմամբ փորձեր անի:

Գլխավորը, վոր ամեն մի տավարատեր պետք է հիշի, այդ այն է, վոր նրա տավարը ամբողջ տարին պետք է կարգին դրության մեջ լինի:

Նորմալ չաղություն ունեցող տավարն ավելի լավ է ոգտագործում իր ստացած կերը, այսինքն ամեն մի ֆ. կերից տալիս է ամենաշատ քանակություն կաթը:

Չպետք է թույլ տալ, վոր կաթի քանակը խիստ կերպով միանգամից ընկնի—պակասի: Կարող է շատ հեշտությամբ 2-3 որում կիթը կիսով չափ պակասել, բայց կիթը բարձրացնելն անհամեմատ դժվար է: 2-3 որում պակասած կիթը 2-3 շաբաթում հազիվ կարելի յե բարձրացնել: Կիթերի խիստ տատանումները չափազանց վնաս են տավարատիրոջ համար և ցույց են տալիս, վոր տավարը կամ վատ է կերակրվում կամ անկանոն է պահվում:

## 15. Ի՞ՆՉ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՐՈՏԱՏԵՂ Է ՀԱՐԿԱՎՈՐ ՄԻ ՏԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

Դժվար է նախապես վորոշել, թե մի տավարի համար ինչ տարածություն արոտատեղ է հարկավոր, վորով-

հետեվ ավելի ճիշտ վորոշելու համար պետք ե ծանոթանալ արոտի հետ, տեսնել ինչ խոտ ե և ինչ քանակությամբ ե աճում. ապա պետք ե իմանալ տավարի կենդանի քաշը և թե վորքան ժամանակ տավարն այնտեղ պիտի արածի։

Այս հարցի վերաբերյալ կարելի յե միայն հետեվյալ մոտավոր տվյալները տալ.

Ամեն մի գլուխ տավարին հարկավոր ե արոտատեղ՝

| | | |
|---|---|---|
| շատ լավ | — $^1/_2$ | դեսյատին |
| լավ | — $^3/_4$ | » |
| միջակ | 1 $^1/_2$ | » |
| վատ | 2 և ավելի | |

Բայց, ինչպես մենք վերեվում ցույց տվինք, այս տվյալները միայն կոպիտ-մոտավոր թվեր են։

Ամեն մի գլուխ կովին անհրաժեշտ տարածություն արոտատեղ վորոշելիս վոչ միայն պիտի ի նկատի ունենալ արոտի վորակը, այլ և կովերի հասակն ու կաթնատվությունը։ Վորքան կովը խոշոր ու կաթնատու ե, այնքան ավելի մեծ արոտատեղ ե պահանջում։

Ի հարկե, այդ բոլորը հաշվել դժվար ե, այդ պատճառով ստիպված ենք ոգտվել կոպիտ-մոտավոր տվյալներից։

## 16. ՑՈՒԼԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՅԵՎ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Վորովհետեվ ցուլին պահելու և կերակրելու յեղանակը մի քիչ տարբերվում ե կովերին պահելու ու կերակրելու յեղանակից, այդ պատճառով տալիս ենք դրա վերաբերյալ կարճ կանոններ.—

I. Ցուլը պետք ե ամեն որ թարմ ոդում ման գա։ Այդ նպաստում ե նրա սեռական ընդունակության պահպանմանը։

II. Ցուլին պետք ե մաքուր պահել, վորովհետեվ կեղտոտ ցուլերի վրա վոջիլ և այլ միջատներ կառաջա-

նան, վորոնք կարող են անցնել կովերին՝ զուգավորման ժամանակ։

III. Ցեղական ցուլի կերաբաժինն է միջին հաշվով 18 ֆ. խոտ, 4-8 ֆ. գարնան դարման և 5-10 ֆ. մանրացրած վարսակ։ Զուգավորումների ուժեղ շրջանում ցուլին տրվում է օրական 10 ֆ. մանրացրած վարսակ, իսկ մնացած ժամանակը 3-4 ֆ. օրական։ Ցուլին արմատապտուղ տալ հարկավոր չի։ Ամառը խոտին ու դարմանին փոխարինում է արոտը։

IV Ցուլին կերակրում ու ջրում են օրական 2 անգամ. առավոտ և յերեկո ժ. 6—7-ին, դրա համար կերաբաժինը բաժանում են 2 հավասար մասերի. ցուլին մաքուր ջուր են տալիս։ Կերերը պետք է լինեն լավ տեսակի և չփչացած։

V. Չպետք է ցուլին կերակրել իր ուզածի չափ. նա շուտով կդառնա դանդաղկոտ և շատ ծանր։

VI. Չի կարելի ցուլին տալ աշորա, սիսեռի և գարու ալյուր, ինչպես նաև չի կարելի նրան կերակրել արմատապտուղներով և սիլոսով, վորովհետև այդ կերերից նա շուտ չաղանում և զուգավորման համար անպետք է դառնում։

VII. Չի կարելի ցուլին ծեծել. այլ պետք է նրա հետ քնքույշ վարվել. ցուլերի հետ կոպիտ վարվելիս նրանք չարանում են և այնուհետև դժվար կլինի նրա հախից գալ։

# ԿԼՅՈՒԿՎԵՐ-ՇՏՐԵՈՒԼԻ ԱՂՅՈՒՍԱԿԸ

| խմգղմմա -գրկառղու Մթափ կծքմկ | խամ -գառղփ մՇոծ վկչոեղգկ | խմգղմմա -գրկառղու Մթափ կծքմկ | խամ -գառղփ մՇոծ վկչոեղգկ | խմգղմմա -գրկառղու Մթափ կծքմկ | խամ -գառղփ մՇոծ վկչոեղգկ | խմգղմմա -գրկառղու Մթափ կծքմկ | խամ -գառղփ մՇոծ վկչոեղգկ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ցերկար. | 122 | Ցերկար. | 126 | Ցերկար. | 130 | Ցերկ. | 134 |
| 120 | 351 | 124 | 399 | 128 | 443 | 132 | 479 |
| 122 | 367 | 126 | 415 | 130 | 456 | 134 | 499 |
| 124 | 382 | 128 | 431 | 132 | 472 | 136 | 520 |
| 126 | 396 | 130 | 444 | 134 | 488 | 138 | 543 |
| 128 | 415 | 132 | 462 | 136 | 503 | 140 | 564 |
| 130 | 431 | 134 | 478 | 138 | 520 | 142 | 581 |
| 132 | 447 | 136 | 493 | 140 | 545 | 144 | 595 |
| 134 | 460 | 138 | 512 | 142 | 562 | 146 | 617 |
| 136 | 475 | 140 | 532 | 144 | 565 | 148 | 632 |
| 138 | 494 | 142 | 549 | 146 | 597 | 150 | 647 |
| 140 | 512 | 144 | 562 | 148 | 611 | 152 | 661 |
| 142 | 528 | 146 | 583 | 150 | 625 | 154 | 686 |
| 144 | 542 | 148 | 597 | 152 | 639 | 156 | 700 |
| 146 | 560 | 150 | 603 | 154 | 661 | 158 | 717 |
| 148 | 575 | 152 | 627 | 156 | 677 | 160 | 732 |
| 150 | 588 | 154 | 654 | 158 | 683 | 162 | 756 |
| 152 | 603 | 156 | 664 | 160 | 707 | 164 | 773 |
| 154 | 620 | 158 | 678 | 162 | 732 | 166 | 793 |
| 156 | 636 | 160 | 698 | 164 | 748 | 168 | 815 |
| 158 | 651 | 162 | 715 | 166 | 766 | 170 | 832 |
| Ցերկար. | 124 | Ցերկար. | 128 | Ցերկար. | 132 | Ցերկ. | 136 |
| 122 | 372 | 126 | 424 | 130 | 447 | 134 | 527 |
| 124 | 388 | 128 | 439 | 132 | 468 | 136 | 538 |
| 126 | 404 | 130 | 454 | 134 | 490 | 138 | 549 |
| 128 | 421 | 132 | 467 | 136 | 522 | 140 | 571 |
| 130 | 437 | 134 | 487 | 138 | 534 | 142 | 588 |
| 132 | 451 | 136 | 500 | 140 | 554 | 144 | 603 |
| 134 | 466 | 138 | 517 | 142 | 571 | 146 | 625 |
| 136 | 482 | 140 | 538 | 144 | 585 | 148 | 640 |
| 138 | 501 | 142 | 555 | 146 | 608 | 150 | 655 |
| 140 | 522 | 144 | 569 | 148 | 622 | 152 | 670 |
| 142 | 538 | 146 | 589 | 150 | 637 | 154 | 694 |
| 144 | 550 | 148 | 604 | 152 | 651 | 156 | 710 |
| 146 | 571 | 150 | 617 | 154 | 673 | 158 | 726 |
| 148 | 585 | 152 | 632 | 156 | 683 | 160 | 741 |
| 150 | 601 | 154 | 654 | 158 | 705 | 162 | 766 |
| 152 | 615 | 156 | 669 | 160 | 720 | 164 | 783 |
| 154 | 632 | 158 | 683 | 162 | 742 | 166 | 804 |
| 156 | 643 | 160 | 699 | 164 | 761 | 168 | 825 |
| 158 | 655 | 162 | 725 | 166 | 781 | 170 | 842 |
| 160 | 678 | 164 | 738 | 168 | 804 | 172 | 865 |

| Կրծքի փաթը սանտիմետրներով | Կենդանի քաշը ֆնտե-րով | Կրծքի փաթը սանտիմետրներով | Կենդանի քաշը ֆնտե-րով | Կրծքի փաթը սանտիմետրներով | Կենդանի քաշը ֆնտե-րով | Կրծքի փաթը սանտիմետրներով | Կենդանի քաշը ֆնտե-րով |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ցերկար. | **138** | Ցերկար. | **142** | Ցերկար. | **146** | Ցերկար. | **150** |
| 136 | 539 | 140 | 597 | 144 | 669 | 148 | 705 |
| 138 | 558 | 142 | 615 | 146 | 674 | 150 | 722 |
| 140 | 577 | 144 | 630 | 148 | 689 | 152 | 739 |
| 142 | 597 | 146 | 654 | 150 | 705 | 154 | 764 |
| 144 | 610 | 148 | 669 | 152 | 722 | 156 | 782 |
| 146 | 632 | 150 | 660 | 154 | 747 | 158 | 800 |
| 148 | 648 | 152 | 700 | 156 | 764 | 160 | 817 |
| 150 | 664 | 154 | 725 | 158 | 781 | 162 | 844 |
| 152 | 678 | 156 | 742 | 160 | 798 | 164 | 864 |
| 154 | 703 | 158 | 759 | 162 | 825 | 166 | 886 |
| 156 | 720 | 160 | 775 | 164 | 843 | 168 | 910 |
| 158 | 736 | 162 | 800 | 166 | 865 | 170 | 927 |
| 160 | 750 | 164 | 817 | 168 | 880 | 172 | 947 |
| 162 | 776 | 166 | 839 | 170 | 906 | 174 | 971 |
| 164 | 793 | 168 | 864 | 172 | 926 | 176 | 996 |
| 166 | 815 | 170 | 881 | 144 | 949 | 178 | 1015 |
| 168 | 834 | 172 | 898 | 176 | 974 | 180 | 1046 |
| 170 | 853 | 174 | 920 | 178 | 992 | 182 | 1066 |
| 172 | 869 | 176 | 954 | 180 | 1021 | 184 | 1068 |
| 174 | 891 | 178 | 963 | 182 | 1133 | 186 | 1108 |
| Ցերկար. | **140** | Ցերկար. | **144** | Ցերկար. | **148** | Ցերկար. | **152** |
| 138 | 562 | 142 | 623 | 146 | 681 | 150 | 731 |
| 140 | 588 | 144 | 638 | 148 | 697 | 152 | 748 |
| 142 | 603 | 146 | 661 | 150 | 712 | 154 | 773 |
| 144 | 620 | 148 | 677 | 152 | 730 | 156 | 792 |
| 146 | 644 | 150 | 693 | 154 | 756 | 158 | 810 |
| 148 | 659 | 152 | 709 | 156 | 773 | 160 | 827 |
| 150 | 677 | 154 | 733 | 158 | 792 | 162 | 854 |
| 152 | 691 | 156 | 750 | 160 | 808 | 164 | 874 |
| 154 | 712 | 158 | 767 | 162 | 834 | 166 | 897 |
| 156 | 730 | 160 | 784 | 164 | 853 | 168 | 920 |
| 158 | 747 | 162 | 810 | 166 | 875 | 170 | 939 |
| 160 | 764 | 164 | 828 | 168 | 898 | 172 | 959 |
| 162 | 788 | 166 | 850 | 170 | 916 | 174 | 983 |
| 164 | 805 | 168 | 874 | 172 | 936 | 176 | 1008 |
| 166 | 827 | 170 | 891 | 174 | 959 | 178 | 1027 |
| 168 | 849 | 172 | 909 | 176 | 983 | 180 | 1052 |
| 170 | 866 | 174 | 932 | 178 | 1004 | 182 | 1080 |
| 172 | 883 | 176 | 955 | 180 | 1033 | 184 | 1100 |
| 174 | 908 | 178 | 975 | 182 | 1046 | 186 | 1120 |
| 176 | 920 | 180 | 1003 | 184 | 1067 | 188 | 1152 |

| Խամգդմա -գրվառղո մթափ վժքմի | Խամ -գառղփ մնաժ վղաեղգի | Խամգդմա գրվառղո մթափ վժքմի | Խամ -գառղփ մնաժ վղաեղգի | Խամգդմա -գրվառղո մթափ վժքմի | Խամ -գառղփ մնաժ վղաեղգի | Խամգդմա -գրվառղո մթափ վժքմի | Խամգառղփ մնաժ վղաեղգի |
|---|---|---|---|---|---|---|---|
| Յերկար. | 170 | Յերկար. | 174 | Յերկար. | 178 | Յերկար. | 182 |
| 168 | 1031 | 172 | 1100 | 176 | 1182 | 180 | 1271 |
| 170 | 1053 | 174 | 1127 | 178 | 1205 | 182 | 1293 |
| 172 | 1075 | 176 | 1157 | 180 | 1241 | 184 | 1320 |
| 174 | 1102 | 178 | 1179 | 182 | 1265 | 186 | 1344 |
| 176 | 1130 | 180 | 1213 | 184 | 1290 | 188 | 1385 |
| 178 | 1152 | 182 | 1237 | 186 | 1314 | 190 | 1409 |
| 180 | 1186 | 184 | 1259 | 188 | 1351 | 192 | 1438 |
| 182 | 1209 | 186 | 1283 | 190 | 1376 | 194 | 1463 |
| 184 | 1232 | 188 | 1321 | 192 | 1402 | 196 | 1487 |
| 186 | 1255 | 190 | 1347 | 194 | 1427 | 198 | 1527 |
| 188 | 1291 | 192 | 1371 | 196 | 1465 | 200 | 1564 |
| 190 | 1315 | 194 | 1396 | 198 | 1492 | 202 | 1598 |
| 192 | 1340 | 196 | 1433 | 200 | 1525 | 204 | 1613 |
| 194 | 1364 | 198 | 1459 | 202 | 1558 | 206 | 1643 |
| 196 | 1401 | 200 | 1491 | 204 | 1585 | 208 | 1688 |
| 198 | 1426 | 202 | 1525 | 206 | 1613 | 210 | 1721 |
| 200 | 1458 | 204 | 1540 | 208 | 1647 | 212 | 1752 |
| 202 | 1490 | 206 | 1576 | 210 | 1682 | 214 | 1795 |
| 204 | 1515 | 208 | 1610 | 212 | 1709 | 216 | 1824 |
| 206 | 1542 | 210 | 1645 | 214 | 1752 | 218 | 1852 |
| Յերկար. | 172 | Յերկար. | 176 | Յերկար. | 180 | Յերկար. | 184 |
| 170 | 1063 | 174 | 1142 | 178 | 1222 | 182 | 1301 |
| 172 | 1085 | 176 | 1171 | 180 | 1239 | 184 | 1328 |
| 174 | 1111 | 178 | 1193 | 182 | 1283 | 186 | 1359 |
| 176 | 1141 | 180 | 1227 | 184 | 1308 | 188 | 1398 |
| 178 | 1164 | 182 | 1253 | 186 | 1332 | 190 | 1423 |
| 180 | 1198 | 184 | 1276 | 188 | 1370 | 192 | 1449 |
| 182 | 1221 | 186 | 1301 | 190 | 1397 | 194 | 1476 |
| 184 | 1244 | 188 | 1337 | 192 | 1423 | 196 | 1515 |
| 186 | 1269 | 190 | 1363 | 194 | 1448 | 198 | 1545 |
| 188 | 1316 | 192 | 1388 | 196 | 1487 | 200 | 1579 |
| 190 | 1329 | 194 | 1413 | 198 | 1514 | 202 | 1613 |
| 192 | 1354 | 196 | 1451 | 200 | 1548 | 204 | 1640 |
| 194 | 1379 | 198 | 1477 | 202 | 1582 | 206 | 1669 |
| 196 | 1415 | 200 | 1510 | 204 | 1596 | 208 | 1703 |
| 198 | 1452 | 202 | 1543 | 206 | 1636 | 210 | 1740 |
| 200 | 1484 | 204 | 1569 | 208 | 1671 | 212 | 1769 |
| 202 | 1516 | 206 | 1596 | 210 | 1707 | 214 | 1813 |
| 204 | 1542 | 208 | 1631 | 212 | 1735 | 216 | 1842 |
| 206 | 1568 | 210 | 1667 | 214 | 1778 | 218 | 1871 |
| 208 | 1584 | 212 | 1693 | 216 | 1807 | 220 | 1901 |

| Կրծքի փաթը սանտիմետրներով | Կենդանի քաշը ֆունտերով | Կրծքի փաթը սանտիմետրներով | Կենդանի քաշը ֆունտերով | Կրծքի փաթը սանտիմետրներով | Կենդանի քաշը ֆունտերով | Կրծքի փաթը սանտիմետրներով | Կենդանի քաշը ֆունտերով |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ցերկար. | **154** | Ցերկար. | **158** | Ցերկար. | **162** | Ցերկար. | **166** |
| 152 | 760 | 156 | 823 | 160 | 884 | 164 | 954 |
| 154 | 787 | 158 | 842 | 162 | 914 | 166 | 981 |
| 156 | 805 | 160 | 860 | 164 | 933 | 168 | 1008 |
| 158 | 823 | 162 | 888 | 166 | 959 | 170 | 1027 |
| 160 | 842 | 164 | 908 | 168 | 985 | 172 | 1049 |
| 162 | 869 | 166 | 932 | 170 | 1004 | 174 | 1076 |
| 164 | 888 | 168 | 956 | 172 | 1024 | 176 | 1103 |
| 166 | 911 | 170 | 976 | 174 | 1050 | 178 | 1125 |
| 168 | 936 | 172 | 998 | 176 | 1077 | 180 | 1159 |
| 170 | 955 | 174 | 1022 | 178 | 1098 | 182 | 1181 |
| 172 | 975 | 176 | 1049 | 180 | 1109 | 184 | 1205 |
| 174 | 1000 | 178 | 1069 | 182 | 1131 | 186 | 1226 |
| 176 | 1026 | 180 | 1110 | 184 | 1176 | 188 | 1261 |
| 178 | 1046 | 182 | 1122 | 186 | 1198 | 190 | 1286 |
| 180 | 1076 | 184 | 1144 | 188 | 1231 | 192 | 1308 |
| 182 | 1098 | 186 | 1166 | 190 | 1253 | 194 | 1332 |
| 184 | 1119 | 188 | 1198 | 192 | 1278 | 196 | 1369 |
| 186 | 1139 | 190 | 1220 | 194 | 1301 | 198 | 1393 |
| 188 | 1172 | 192 | 1244 | 196 | 1336 | 200 | 1425 |
| 190 | 1194 | 194 | 1266 | 198 | 1360 | 202 | 1459 |
| Ցերկար. | **156** | Ցերկար. | **160** | Ցերկար. | **164** | Ցերկար. | **168** |
| 154 | 797 | 158 | 850 | 162 | 924 | 166 | 996 |
| 156 | 811 | 160 | 872 | 164 | 943 | 168 | 1015 |
| 158 | 833 | 162 | 890 | 166 | 967 | 170 | 1042 |
| 160 | 841 | 164 | 917 | 168 | 994 | 172 | 1064 |
| 162 | 878 | 166 | 943 | 170 | 1004 | 174 | 1091 |
| 164 | 898 | 168 | 967 | 172 | 1033 | 176 | 1118 |
| 166 | 922 | 170 | 989 | 174 | 1060 | 178 | 1139 |
| 168 | 947 | 172 | 1008 | 176 | 1087 | 180 | 1174 |
| 170 | 965 | 174 | 1031 | 178 | 1110 | 182 | 1198 |
| 172 | 986 | 176 | 1063 | 180 | 1143 | 184 | 1220 |
| 174 | 1011 | 178 | 1085 | 182 | 1165 | 186 | 1349 |
| 176 | 1038 | 180 | 1113 | 184 | 1189 | 188 | 1278 |
| 178 | 1052 | 182 | 1135 | 186 | 1210 | 190 | 1303 |
| 180 | 1088 | 184 | 1158 | 188 | 1246 | 192 | 1325 |
| 182 | 1110 | 186 | 1179 | 190 | 1266 | 194 | 1349 |
| 184 | 1130 | 188 | 1211 | 192 | 1292 | 196 | 1386 |
| 186 | 1152 | 190 | 1235 | 194 | 1315 | 198 | 1413 |
| 188 | 1183 | 192 | 1258 | 196 | 1351 | 200 | 1444 |
| 190 | 1209 | 194 | 1280 | 198 | 1375 | 202 | 1476 |
| 192 | 1237 | 196 | 1315 | 200 | 1405 | 204 | 1501 |

| Կրծքի փաթը սանտիմետրներով | Կենդանի քաշը ֆունտերով | Կրծքի փաթը սանտիմետրներով | Կենդանի քաշը ֆունտերով | Կրծքի փաթը սանտիմետրներով | Կենդանի քաշը ֆունտերով | Կրծքի փաթը սանտիմետրներով | Կենդանի քաշը ֆունտերով |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ցերկար. | **186** | Ցերկար. | **190** | Ցերկար. | **194** | Ցերկար. | **198** |
| 184 | 1340 | 188 | 1442 | 192 | 1525 | 196 | 1632 |
| 186 | 1371 | 190 | 1469 | 194 | 1552 | 198 | 1664 |
| 188 | 1410 | 192 | 1496 | 196 | 1596 | 200 | 1701 |
| 190 | 1437 | 194 | 1525 | 198 | 1624 | 202 | 1734 |
| 192 | 1463 | 196 | 1556 | 200 | 1660 | 204 | 1763 |
| 194 | 1490 | 198 | 1590 | 202 | 1697 | 206 | 1792 |
| 196 | 1530 | 200 | 1630 | 204 | 1725 | 208 | 1829 |
| 198 | 1558 | 202 | 1667 | 206 | 1754 | 210 | 1871 |
| 200 | 1592 | 204 | 1693 | 208 | 1791 | 212 | 1901 |
| 202 | 1627 | 206 | 1724 | 210 | 1830 | 214 | 1952 |
| 204 | 1656 | 208 | 1759 | 212 | 1859 | 216 | 1981 |
| 206 | 1685 | 210 | 1797 | 214 | 1907 | 218 | 2013 |
| 208 | 1720 | 212 | 1827 | 216 | 1937 | 220 | 2043 |
| 210 | 1750 | 214 | 1875 | 218 | 1969 | 222 | 2091 |
| 212 | 1785 | 216 | 1903 | 220 | 2001 | 224 | 2125 |
| 214 | 1829 | 213 | 1934 | 222 | 2047 | 226 | 2169 |
| 216 | 1859 | 220 | 1964 | 224 | 2070 | 228 | 2209 |
| 218 | 1890 | 222 | 2011 | 226 | 2120 | 230 | 2244 |
| 220 | 1919 | 224 | 2042 | 228 | 2161 | 232 | 2275 |
| 222 | 1965 | 226 | 2075 | 230 | 2165 | 244 | 2293 |
| Ցերկար. | **188** | Ցերկար. | **192** | Ցերկար. | **196** | | |
| 186 | 1391 | 190 | 1481 | 194 | 1573 | | |
| 188 | 1430 | 192 | 1510 | 196 | 1618 | | |
| 190 | 1457 | 194 | 1538 | 198 | 1646 | | |
| 192 | 1484 | 196 | 1581 | 200 | 1682 | | |
| 194 | 1510 | 198 | 1610 | 202 | 1720 | | |
| 196 | 1552 | 200 | 1645 | 204 | 1748 | | |
| 198 | 1580 | 202 | 1681 | 206 | 1778 | | |
| 200 | 1615 | 204 | 1709 | 208 | 1815 | | |
| 202 | 1651 | 206 | 1740 | 210 | 1854 | | |
| 204 | 1679 | 208 | 1776 | 212 | 1884 | | |
| 206 | 1708 | 210 | 1813 | 214 | 1932 | | |
| 208 | 1743 | 212 | 1842 | 216 | 1963 | | |
| 210 | 1781 | 214 | 1891 | 218 | 1995 | | |
| 212 | 1810 | 216 | 1920 | 220 | 2028 | | |
| 214 | 1856 | 218 | 1952 | 222 | 2074 | | |
| 216 | 1886 | 220 | 1984 | 224 | 2108 | | |
| 218 | 1917 | 222 | 2030 | 226 | 2150 | | |
| 220 | 1947 | 224 | 2062 | 228 | 2191 | | |
| 222 | 1993 | 226 | 2101 | 230 | 2224 | | |
| 224 | 2025 | 228 | 2131 | 232 | 2257 | | |

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Եջ

Յերկու Խոսք . . . . . . . . . . . . . . . . 3

**Մասն I Ինչպես պետք է պահել կաթնատու տավարը** . 5

1. Կաթնատու տավար պահելու նպատակը . . . . . . . 5
2. Կաթնատու տավար պահելու ընդհանուր կանոնները . . 6
3. Տավարն ինչպես պետք է պահել ամառը . . . . . . . 23
4. Տավարի վատության գլխավոր պատճառներից մեկը վատ արոտն է . . . . . . . . . . . . . . 24
5. Մի քանի ընդհանուր կանոններ ամառը տավարն արոտում պահելու վերաբերյալ . . . . . . . . . . 26

**Մասն II Ինչպես պետք է կերակրել կաթնատու տավարին Դանիայում ընդունված ձևով** . . . . . . . 29

6. Ինչու պետք է կաթնատու տավարին կերակրել անպայման իր քաշի համեմատ . . . . . . . . . . . 29
7. Կերի տեսակները . . . . . . . . . . . . . 33
8. Ինչպե՞ս փոխարինել մի կերը մյուսով . . . . . . . —
9. Տարբեր կենդանի քաշ ունեցող տավարին ի՞նչ քանակությամբ կեր է հարկավոր իր առողջ գոյությունը պահպանելու համար . . . . . . . . . . . . . 55
10. Վորոշ քանակությամբ կաթ ստանալու համար վո՞րքան կեր է հարկավոր տալ տավարին . . . . . . . . 60
11. Կերաբաժին կազմելու ամենակարևոր կանոնները . . 65
12. Նորմաներով կերաբաժիններ կազմելու օրինակները . 72
13. Տավարին կերակրելու կարգը . . . . . . . . . 75
14. Ինչպես կերակրել տավարին ամառը . . . . . . . . 78
15. Ի՞նչ տարածության արոտատեղ է հարկավոր տավարի համար . . . . . . . . . . . . . . . . 80
16. Ցուլին պահելու և կերակրելու կանոնները . . . . . . 81
17. Կլյուվեր-Շտրատուխի աղյուսակը . . . . . . . . . 83


## ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եջ—20 վերևից հաշված 13 և 14-րդ տողերը ավելորդ են, ամբողջովին պետք է ջնջել

» 22 » » 3-րդ տողում տպած է «ուստի վազ» պետք է կարդալ «ուսի գագաթից»

» 64 » » 21 տողում տպած է «մեկն ու մեկը» պետք է լինի «մեկը»

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ

## ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ Խ. ՑԵՐԻՑՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ «ՄԱՃԿԱԼԻ» ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՐԻԱՅԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔՈՒՅԿՆԵՐԸ

1. **Խ. Ցերիցյան** — *Ինչպիսի սերմացու պիտի ցանել (սպառված)*
2. *Բամբակի և կաղամբի վնասատուները* Գինն է 12 կ. չերվ։
3. **Ն. Ն. Բոգդանով** — *Ընտանի կենդանիների քոսը* Գինն է 12 կ. չերվ։
4. **Գ. Գրձելյան** — *Բամբակի չոռ հիվանդությունը* Գինն է 12 կ. չերվ։
5. **Գ. Ն. Սոկովնին** — *Ինչպես պետք է կռվել չորության դեմ անջրդի հողերում* — Գինն է 15 կ. չերվ։
6. **Պրոֆ. Պ. Կոստիչև** — *Ինչ կա հողի մեջ և ինչպիսի հողեր են լինում* — — — Գինն է 10 կ. չերվ։
7. **Խս. Տեր-Ներսիսյան** — *Խնձորենու վնասատուները և նրանց դեմ կռվելու միջոցները* — Գինն է 12 կ. չերվ։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0002742

264.

A II 23868



ԳԻՆՆ Է՛ 30 ԿՈՊ.